2 ՀՈՒՆԻՍ 2017 ՈՒՐԲԱԹ 21(5469)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Բեռլինը դաշնակիցների թիվն ընդլայնում է

Մինչ աշխարհի մեր հատվածն երեկ ուշ երեկոյան սպասում էր ԱՄՆ նախագահ Թրամփի՝ Փարիզում 2015- ին 195 երկրի հավանությամբ կնքված գլոբալ ջերմացման դեմ պայքարի համաձայնագրին հավատարիմ մնալ- հրաժարվելուն, Բեռլինը «նոր» դաշնակիցների հետ էր հանդիպում. Հնդկաստանի վարչապետի այցին հունիսի 1- ին հաջորդած Չինաստանի վարչապետ Լի Կեքիանգի հետ կանցլեր Մերկելի զրույցի առանցք է դարձել հուլիսի սկզբին Համբուրգում գումարվելիք Մեծ քսանյակի գագաթաժողովը: Պաշտոնական Պեկինը հավատարիմ կմնա կլիմայի վերաբերյալ համաձայնագրին, հայտարարել է Չինաստանի վարչապետը՝ առիթ տալով գերմանացիներին այսպես տրամաբանել՝ մի՞թե իսկապես ամերիկյան հետաքրքրությունից է բխում Չինաստանի դերակատարման աճը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Պետություն եւ իշխանություն շփոթը

Դասագրքային ճշմարտություն է, որ պետություն եւ իշխանություն իրար շաղկապված, բայց տարբեր հասկացություններ են, քաղաքագիտության մեջ դրանք վաղուց ուսումնասիրված, սահմանված ու բացատրված են՝ համապատասխան փաստերով, պատմական հոլովույթներում գրանցված օրինակներով՝ սկսած եգիպտական-փարավոնական ժամանակաշրջանի «աստվածային» ըմբռնումներից, տրկատիրական եւ ավելի ուշ՝ ճորտատիրական ու ավատատիրական հասարակարգերից մինչեւ ավելի նոր ժամանակների հեղափոխությունները, միապետությունների տապալումները, քաղաքացիական հասարակարգերի հաստատումը տարբեր պետություններում ու, վերջապես, համամարդկային իրավունքների կիրառման մեր ժամանակները, երբ ուժի իշխանությանը եկել է փոխարինելու ուժեղ իշխանություն հասկացությունը, որի ուժը, սակայն, հասկանշվում է «փափուկ ուժի իշխանությամբ» (soft power), որի ամբողջական կիրառման անցումային փուլում է գտնվում քաղաքակիրթ աշխարհն այսօր:

Նպատակս չէ տեսական քննարկումների մեջ մտնելը, մանավանդ որ մասնագետ չեմ, այլ՝ հետեւորդ հասարակական իմաստության պարզությանը, որ այս պարագայում ձեւակերպվում է այսպես. «Իշխանությունները գնայուն են, պետությունը՝ մնայուն»: Այս միտքը մեր երկրում, հայրենաբնակ մեր ժողովրդի մոտ սկսեց արմատավորվել Խ. Միության կազմաքանդման օրերին եւ այնուհետեւ, երբ Հայաստանը հռչակվեց ազատ, անկախ, ինքնիշխան պետություն, եւ հայաստանցի մարդու մտապատկերից կամաց-կամաց սկսեց ջնջվել կուսակցություն-պետություն նույնականության 70-ամյա շփոթը, միակուսակցականության տիրապետությունը: Ու թեեւ հետագա տարիների զարգացումները՝ ընտրությունների միջոցով իշխանափոխություն ապահովելու ջանքերի ձախողումը եւ քաղաքական լիարժեք ու բազմաշերտ էլիտայի չձեւավորվելը վնասեցին քաղաքական հասարակարգի ստեղծման գործը մեր երկրում, սակայն գոնե տեսականորեն տիրապետող է մնում վերոհիշյալ ճշմարտությունը՝ պետություն եւ իշխանություն տարբեր հասկացություններ են:

Սա՝ Հայաստանում: Մինչդեռ Սփյուռքում, օտար եւ տարբեր վարչակարգերի եւ անգամ հասարակարգերի պայմաններում ապրող հայի մտքում պետություն եւ իշխանություն շփոթը համայնքային որոշ շերտերում դեռեւս մնում է՝ այսպես կոչված հայրենական գործերում: Մինչդեռ միջին սփյուռքահայը, ծնվելով ու դաստիարակվելով գերազանցապես քաղաքակրթված երկրներում, առնվազն փորձում է որդեգրել անգլիական սկզբունքը՝ «Անգլիացին դրսում իր թագուհու արժանապատվությունն ու երկրի շահերը պաշտպանող ջենտլմենն է, իսկ երկրի ներսում՝ իր իրավունքները պաշտպանող քաղաքացին»:

Վերոհիշյալ շփոթն ու հակասությունը առաջին հերթին իրենց մաշկի վրա են զգացել, նվազ կամ առավել չափով, մեր ավանդական կուսակցությունները, որոնք կառույցներ ունեն նաեւ գաղթօջախներում ու համատեղ ծրագրեր: Գաղտնիք չէ, որ հայրենական եւ սփյուռքյան հատվածների միջեւ երբեմն առաջանում են մոտեցումների տարբերություններ, առաջնահերթությունների որոշման հարցում տարակարծություններ, ինչը բնական է: Սակայն երբեմն կեցվածքների միջեւ տարբերությունը խորանում է այնքան, որ դառնում է անլուծելի: Դա հատկապես դրսեւորվում է Ռամկավար Ազատական կուսակցության տարբեր թեւերի միջեւ, ինչպես 1994-96 թթ.ին, երբ ՌԱԿ Կենտրոնական վարչությունը, գլխավորությամբ իր բեյրության թեւի, եւ ոչ առանց նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի իշխանության քաջալերանքի, ուղղակի ճակատ բացեց ՌԱԿ Հայաստանի կառույցի դեմ, ինչպես նաեւ ջանաց փակել «**Ազգ**» օրաթերթը: Նրանց առարկությունն այն էր, որ «կուսակցությունը միշտ հավատարիմ է եղել Հայաստանի **պետությանը**, մինչդեռ հիմա, երբ երկիրը դարձել է անկախ, ինչո՞ւ պետք է դառնա ընդդիմադիր»: Այլ խոսքով՝ միեւնույն շփոթը՝ պետություն-իշխանություն:

Սակայն դժվար էր երեւակայել, որ 20 տարի հետո, երբ այնքան բան է փոխվել աշխարհում ու մեր երկրում, նույն շփոթը, դարձյալ իշխանությունների մեղսակցությամբ, կշարունակվի, այս անգամ ոչ թե կենտրոնական վարչության, այլ մի խումբ ինքնակոչ եւ ինքնահավաք մարդկանց կողմից, որոնց միակ «կուսակցական» գործունեությունը ցարդ եղել է հանդիպել տարբեր պաշտոնյաների ու եկեղեցականների հետ եւ «պատկեր մը քաշվիլ», այլ խոսքով՝ ինքնահաստատվել:

Բայց առավել զարմանալին, ավելի շուտ՝ անտրամաբանելին այն է, որ հիշյալ խմբակի պարագլուխը, որ Բուենոս Այրեսի նահանգային խորհրդում մի քանի տարի պատգամավոր է եղել եւ, հետեւաբար, պետք է հասու լիներ քաղաքակիրթ երկրների ժողովրդավարական կանոններին եւ ըմբռնումներին, հետո ունենալով ՌԱԿ Հալեպի կառույցի այժմ դասալիք նախկին ղեկավարին, ինչպես նաեւ Բեյրութից՝ ոչ հայկական մի կուսակցության անդամի, մայիսի 29-ին Երեւանի Թեքեյան կենտրոնում տված ասուլիսի ընթացքում, պատասխանելով «Առավոտի» հարցին՝ ասել է. «Այսօր եկել ենք այն եզրակացության, որ Հայաստանում ՌԱԿ պետք չէ գոյություն ունենա, 70-ից ավելի կուսակցությունների շարքում: Մենք 95 տարի չենք աշխատել, հայություն պահել, որ գանք ներքին քաղաքական խնդիրներում մրցակցենք: ՌԱԿ-ը Հայաստանի ներքին խնդիրներից պետք է հեռանա, դիտորդ լինի, որ Հայաստանում ժողովրդավարությունը զարգանա, ընտրությունները թափանցիկ լինեն»:

Խոստովանենք՝ քաղաքական այսքան խորը տգիտությունը հուսահատեցնող է: Շփոթը շարունակվում է: Մեզ մնում է մի պարզ խորհուրդ տալ. «Պարոններ, փորձեք դրսում իսկապես ջենտլմեն լինել, իսկ ներսում մենք կմնանք լավ քաղաքացի»:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Անտեսանելի վտանգներ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Նոր Ազգային ժողովի արտահերթ նիստը դարձավ այն երեւակիչը, որն առաջին հետեւությունների համար նյութ տալիս է, թեկուզ՝ պատգամավորական կորպուսի որակական գնահատման եւ մի շարք այլ առումներով: Դա, սակայն, կանենք այլ առիթներով, այս անգամ մի այլ զուգահեռ հանգիստ չտվեց մեզ՝ վերստին նորոգելով այն անարդարության զգացումը, որն առաջացնում է Հայաստանում արտոնյալ կարգով մի շարք շերտերին կենսաթոշակի անցնելու հնարավորություն տվող կարգի ժամկետը օրենսդրությամբ երկարաձգելու վերջին նոր առիթը:

Հիշեցնենք՝ կառավարության առաջարկով ԱԺ Վեցերորդ գումարման Ազգային ժողովը արտահերթ նիստով երկու ընթերցմամբ հավանություն տվեց «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքներ տալու մասին» օրենքում փոփոխություններին, որոնցով դատախազների, հատուկ քննչական կոմիտեի քննիչների եւ ծառայողների պաշտոն զբաղեցնող անձանց, քաղաքացիական տարվա մասնագիտական ստաժի դեպքում, արտոնյալ կենսաթոշակ ստանալու իրավունքը եւս երեք տարով երկարաձգվում է՝ վերացնելով մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ այդ արտոնությունից օգտվելու սահմանափակումը: Թե ինչ է նստելու դա մեր բյուջեի վրա, քանի մարդ կարող էր միաժամանակ հիմա թոշակի գնալ ու ծանրացնել բյուջեի լարվածությունը, ու էդ երկարաձգմամբ բյուջեն փրկվեց՝ էդ լոլոները նորից չենք կարդա, մամուլը այս օրերին բավական գրեց:

⇨6

## Ձնագնդի նման աճելու է «Ավրորայի» համաշխարհային արձագանքը

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

«Հպարտ եմ, որ հայ եմ», «Ավրորա» 2017-ի մրցանակաբաշխության ավարտին ի պատասխան Հանրային հեռուստատեսության հարցի, ասաց մաեստրո **Տիգրան Մանսուրյանը**: Ու ես ոչ միայն հրաշալի հասկացա նրան, այլեւ հեռվում էլ նույն զգացողությունն ունեցա արդեն երկրորդ տարին անընդմեջ, մանավանդ, չեմ թաքցնի, այս անգամ նաեւ՝ «էգոիստական» բացատրությամբ: Մարդասիրության հրաշալի օրինակ, աշխարհի հետ այսպես հաղորդակցվելու՝ նվիրական մարդուն որոնելու, նրան աշխարհի թաքուն անկյուններում գտնելու, մեծարելու, այդ մարդու կերպարն ուսանելի, գործը «վարակիչ» դարձնելու հրաշալի ուղերձն այս անգամ տեղ էր հասել:

Գերմանական «Թագեսշպիգելն» «Ավրորային» էր անդրադարձել երկու հրապարակմամբ՝ Երեւանից: Նախորդ տարի գերմանական լրատվական աշխուժությունն «Ավրորայի» հանդեպ պայմանավորված էր իհարկե Ջորջ Քլունիի ներկայությամբ, այս տարի էլ դեղին մամուլն անտարբեր չմնաց այն փաստին, որ Քլունին Երեւան գալուց հրաժարվել է, քանի որ շուտով Ամալը լույս աշխարհ է բերելու իր երկվորյակներին: Ուրեմն «Թագեսշպիգելի» մեր գործընկերոջ՝ **Ռոլֆ Բրոքշմիդտի** (Rolf Brockschmidt) Երեւանում այս տարի գտնվելն ու «Ավրորայի» հրաշալի նախաձեռնության մասին 2 հոդված հրապարակելը շոյում է իմ լրագրողական «էգոիզմը»: Այն, որ անգլիալեզու, ռուսալեզու պարբերականներն անդրադառնում են «Ավրորային», կարծես բավարարում են մեր սպասելիքները, բայց չմոռանանք, որ աշխարհին օգնելու իր պատրաստակամությամբ, ֆինանսներ տրամադրելու առաջնահերթ օրինակ է գերմանացին, որ քսակը բաց է անում հենց այդպիսի նախաձեռնությունների համար: Բրոքշմիդտը սիրով էր գրել «Ավրորայի», Հայոց ցեղասպանության զոհերի անունից հայ վերապրողների ժառանգների մարդասիրական նախաձեռնության, կարիքավոր մարդկանց՝ զոհաբերությունների գնով օգնող «լուռ հերոսների», երեւանյան 3 ժամանոց մրցանակաբաշխության տոնական երեկոյի մանրամասների, մրցանակակիր Թոմ Քաթինայի, նրան փոխարինելու մեկնած հայ բժիշկների մասին, քննադատական հայացքն արտոնելով մեզ՝ հայ լրագրողներիս: Նրան իհարկե չենք հարցնի՝ իր կարծիքով, «ժամանակ եւ տարածություն հաղթահարած» իր հայրենակցի՝ Բախի նման վերընթերցումն ինչ- որ բան ավելացնո՞ւմ է մեր ունկերի հիշողությանը, ոչ էլ մյուս հարցը կտանք՝ հունիսի 6- ին Բեռլինի ֆիլհարմոնիայում ունկնդրելո՞ւ է Մարիա Գուլեգինայի եւ Յուսիֆ Էյվազովի համերգը: Այս վերջինին կարող եմ ինքս էլ հետեւել, թեպետ համոզված եմ, որ իր արմատների մասին ոչ միշտ ջերմությամբ խոստովանող երգչուհու համար իտալացի եւ ռուս կոմպոզիտորների ստեղծագործությունների մատուցումն ավելի «դյուրին» կլինի, քան մայիսի 28- ին երեւանյան բեմում «հայկական» երգացանկն արտոնեց:

⇨9



Էրդողանը Վաշինգտոն է արտահանում իր սարսափի գործելաոճը

էջ 4



«Լա բոհեմը» բալետային ձեւաչափով

էջ Ա



Հենրիխ Մխիթարյա՞ն, թե՞ Ռուբեն Հայրապետյան

էջ 5

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Կը խնդրուի...

Երբ Սիմոն Սիմոնեան գրեց իր՝ «Կը խնդրուի խաչաձեւել»ը, երգիծական շղարշի մը տակ լուրջ ըսելիքներ ունէր մեր անցեալին ու ներկային մասին: Հայ ժողովուրդի ծագման տասհազարամեակի առթիւ կազմակերպուած հանդիսութեան մը ընթացքին բեմ պիտի բարձրանային Հայոց պատմութեան նշանաւոր այրեր եւ հանդիսատեսին դիմաց ելոյթ ունենալով պիտի փորձէին հարցեր պարզել եւ իրենց գործած սխալները արդարացնել:

Հանդիսութեան կազմակերպչական աշխատանքները պիտի կատարէին մեր երեք աւանդական կուսակցութիւնները, իւրաքանչիւրին յատուկ պաշտօն մը վստահելով:

Թատերակին թեման այս էր մօտաւորապէս, երեւոյթով հետաքրքրական եւ զուարճալի, սակայն, խորքին մէջ այդքան ալ ոչ անմեղ: Սիմոնեան ժամանցի համար բան չէր գրեր, կը գրէր՝ երբ ըսելիք ունէր, տալիք պատգամ: Եւ այս գործն ալ իր մէջ կը կրէր պատգամ մը, որ իրականութեան մէջ ականուած ռումբի մը չափ վտանգաւոր էր շատերու համար եւ այդ պատճառով ալ ոչ մէկ միութիւն, կամ թատերախումբ ու բեմադրիչ համարձակեցաւ բեմադրել զայն, ինչ- ինչ տհաճ հետեւանքներէ խուսափելու համար:

Այս յառաջաբանը ըրի, ըսելու համար, թէ հիմա ալ յաճախ կը հանդիպինք անցեալը փորփրողներու: Անցեալը փորփրել եւ անցեալի սխալները մէջտեղ հանել յանուն անոնցմէ դաս քաղելու, հասկնալի է, սակայն անցեալի սխալներ,-ըստ ենթակային-, մէջտեղ բերել անուանարկելու համար կողմ մը, կամ ինչ-ինչ հաշիւներ մաքրելու համար, պարզապէս վնասակար է եւ լրիւ անօգուտ:

Ըսել ուզածս այն է, որ յաճախ դիմատետրի վրայ, կամ մամուլի մէջ, առանց առիթի, հին պատմութիւն մը կը քրքրեն եւ, -ըստ իրենց,- տուեալ կազմակերպութեան անցեալին գործած սխալը մէջտեղ կը նետեն, չես գիտեր ի՞նչ յետին նպատակով: Անշուշտ հարցը այստեղ չի վերջանար, անուանարկուող կողմը անպատասխան չի ձգեր վիրաւորանքը ու այս անգամ՝ աւելի թթու բառերով, ցոյց տալու համար, որ «գիւղը անտէր չէ»... Եւ այսպէս տհաճ գրչապայքարը կը շարունակուի, որոշ մարդոց հաճոյք պատճառելով, ուրիշներու ալ՝ տհաճութիւն:

Անհնար է անցեալին վերադառնալ գիտնալու համար իրականութիւնը, իսկ յենելով միայն արձանագրուած պատմութեան վրայ, այդ ալ բաւարար չէ, քանի որ պատմութիւնը գրի առնողները կողմի մը մարդիկ եղած են եւ իւրաքանչիւրը իր տեսանկիւնէն նայած է հարցերուն եւ նկարագրած, այնպէս որ յումպէտս վատնուած ճիգ պիտի ըլլայ եւ անօգուտ աշխատանք:

Եթէ չենք կրնար վերադառնալ անցեալին, ոչ ալ տեսաերիզներ, կամ ձայնային արձանագրութիւններ ունինք ու չենք կրնար գիտնալ եղածներուն իսկական դրդապատճառները, ուրեմն աւելի լաւ է հանգիստ ձգել անցեալն ու իր մարդիկը եւ ըսել որ այն ատեն պարագաները այդպէս թելադրած են, եւ մարդիկ ըստ այդմ շարժած են, եթէ անշուշտ չենք կասկածիր անոնց ուղղամտութեան վրայ:

Որեւէ սխալ, սխալ ըլլալէ կը դադրի եւ փառաբանութեան կ՚արժանանայ, եթէ յաջող աւարտ ունենայ, եւ անշուշտ հակառա՛կը կը պատահի, եթէ ձախողի:

Անցեալը մոռնալ եւ զայն թաղել՝ անկարելի է եւ սխալ, թող պահ դրուի որպէս աւանդ: Աւելի օգտակար է ներկայով զբաղիլ եւ ապագայի ծրագիրներ մշակել: Ներկային այնպէս մը գործենք, որ ապագային քննադատութեան ու պարսաւանքի առարկայ չդառնանք:

# Վրաստանի պարտությունը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**Ստեփանակերտ**

Շուրջ մեկ ամիս առաջ haqqin.az-ը մի հոդվածով բարձրացրել էր Թբիլիսիում «հակաալիեւյան ընդհատակի» թեման: Արդեն այդ ժամանակ էր պարզ, որ Ադրբեջանի հատուկ ծառայությունները, ինչպես ասում են, աքցանի մեջ են վերցրել Ալիեւի քաղաքական հալածանքների հետեւանքով Ադրբեջանից տարագրված եւ Վրաստանում հաստատված մի խումբ ընդդիմադիր գործիչների, իսկ մամուլի «անկեղծ զայրույթն» այդ մարդկանց հանդեպ ընդամենը հապշտապ կարված վարագույր է՝ քողարկելու իշխանությունների վրեժխնդրությունը:

Այդուհանդերձ, ադրբեջանական ընդդիմադիր շրջանակները մինչեւ վերջին պահը հույս էին փայփայում, որ զարգացման եվրոպական ուղին ընտրած եւ տարածաշրջանում ժողովրդավարության ու օրինականության միջնաբերդի համարում ունեցող Վրաստանը չի տրվի Ադրբեջանի իշխող վարչախմբի պահանջներին: Դա տեղի չունեցավ: Մայիսի 29-30-ին Ադրբեջանի հատուկ ծառայությունները Թբիլիսիում իրականացրել են մի խումբ ադրբեջանցի գործիչների բացահայտ առեւանգում, որից հետո այդ մարդիկ ձեռնաշղթաներով տեղափոխվել են Բաքու եւ կալանավորվել:

Խնդիրն այն չէ, որ Ալիեւը հետապնդում է քաղաքական հակառակորդներին եւ չեզոքացնում, երբեմն էլ ֆիզիկապես ոչնչացնում նրանց: Նման դեպքերն արդեն ոչ ոքի չեն զարմացնում: Վերջին ձերբակալությունների դեպքում ընդգծվում է այն, որ Ադրբեջանի հատուկ ծառայությունները գործել են Վրաստանի տարածքում, այդ երկրի մայրաքաղաքում: Դա Վրաստանի պարտությունն է Ադրբեջանի իշխող վարչախմբին:

Իրավիճակն այլ կլիներ, եթե Ադրբեջանը պաշտոնապես դիմած լիներ Վրաստանի պատկան մարմիններին՝ ներկայացնելով անհերքելի ապացույցներ, որ Թբիլիսիում իրոք ստեղծվել է Ադրբեջանում պետական հեղաշրջում ծրագրող ընդհատակյա խումբ, որի անդամները կեցության կարգավիճակ չունեն եւ ենթակա են Ադրբեջանի իրավազորությանը, ուստի պետք է արտաքսվեն Վրաստանից եւ հանձնվեն Ադրբեջանին: Այս դեպքում Վրաստանը դեմք փրկելու հնարավորություն կունենար:

Բայց Ալիեւը գործել է գրեթե թշնամաբար, եւ վրացական իշխանությունները ենթարկվել են նրա կամքին՝ արտոնելով, որ ադրբեջանական ուժային կառույցները մուտք գործեն Թբիլիսի եւ իրականացնեն իրենց համար անցանկալի անձանց առեւանգում, ձերբակալում եւ տեղափոխում Ադրբեջան: Վրաստանը փաստացի իր ինքնիշխանությունն ի սպաս է դրել Ալիեւի վարչախմբի հետ «եղբայրական» հարաբերություններին:

Մինչ այդ վրացական կողմի իրազեկմամբ վրաց-ադրբեջանական սահմանի «Կարմիր կամուրջ» անցակետում ձերբակալվել էր Ադրբեջանի Ժողովրդական ճակատ ընդդիմադիր կուսակցության նախագահի տեղակալ Գյոզալ Բայրամլին: Նրա ձեռնապայուսակում ադրբեջանցի մաքսավորները «հայտնաբերել են չհայտարարագրված 12 000 դոլար»: Բայրամլին կասկածվում է արեւմտյան աղբյուրներից ԱԺՃ «հակապետական գործունեությունը ֆինանսավորելու գործում կապավորի դեր կատարելու» մեջ:



*Ձերբակալված ընդդիմադիր լրագրող եւ ակտիվիստ Աֆղան Մուխթարլըն*

Ստացվում է, որ ժողովրդավարական Վրաստանն ամեն ինչ անում է, որպեսզի Ադրբեջանում Ալիեւի վարչախումբը քաղաքական ընդդիմախոսներին բռնաճնշելու հարցում որեւէ դժվարության չհանդիպի: Ձեւական տեսանկյունից ամեն ինչ «բացատրություն ունի. Վրաստանը չի խառնվում այլ պետությունների ներքին գործերին», բայց փաստացի ստացվում է, որ Ադրբեջանը միջամտում է Վրաստանի ներքին գործերին:

Վրաստանը, ինչպես յուրաքանչյուր ժողովրդավարական երկիր, իրավասու է քաղաքական ապաստան տրամադրել իրենց հայրենիքում բռնությունների ենթարկվող անձանց: Թբիլիսիում հաստատված ադրբեջանցի լրագրողները եւ իրավապաշտպանները լավ օրից չէ, որ լքել են իրենց հայրենիքը: Նրանք խուսափել են հետապնդումներից, ֆիզիկական ոչնչացման իրական սպառնալիքներից: Այդ մարդիկ համոզված էին, որ Վրաստանը օրինական երկիր է, այնտեղ իրենց անվտանգությունը եւ ազատ կենսագործունեությունը երաշխավորված է: Հետեւանքներն աչքի առաջ են. օրը ցերեկով Թբիլիսիի կենտրոնում երեք ադրբեջանցի գործիչ առեւանգվել է Ալիեւի վարչախմբի սպասարկուների կողմից:

Ադրբեջանի հավակնոտությունը հասել է այն աստիճանի, որ չի ապահովվել գործի նույնիսկ ընթացակարգային կողմը՝ վրացական իրավապահները չեն մասնակցել այդ անձանց «վնասազերծմանը», Թբիլիսիի դատարանը նրանց Ադրբեջանին արտահանձնելու որոշում չի կայացրել: Ադրբեջանցի հատուկջոկատայինները գործել են այնպես, ինչպես եթե «հանցագործ» ձերբակալեին իրենց երկրի որեւէ հեռավոր գյուղում:

Երեւույթն, ամենայն հավանականությամբ, քննարկման առարկա կդառնա արեւմտյան կառույցներում: Վրաստանը ոչ միայն ժողովրդավարական երկրի, այլեւ հարավկովկասյան տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման ոչ կառավարական շփումների հարթակի համարում ունի: Թբիլիսին համարվում է Հարավային Կովկասում արեւմտյան արժեքների գեներացման կենտրոն, այնտեղ պարբերաբար հրավիրվում են միջազգային հեղինակավոր փորձագետներ, քաղաքագետներ եւ մեդիա-տեխնոլոգներ, անցկացվում խորհրդաժողովներ եւ այլն, այդ թվում նաեւ Հայաստանից:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից մայիսի 29-30-ին Թբիլիսիում իրականացրած գործողությունները սեւ բիծ են այդ քաղաքի եւ Վրաստանի իշխանությունների հեղինակության վրա: Վրացական իշխանությունները պետք է կշեռքի նժարներին դնեին Ալիեւի հետ «եղբայրությունը» եւ արեւմտյան աշխարհի ու հարեւան այլ երկրների արձագանքը: Այդ դեպքում նրանք պարտավորված կլինեին մերժել Ալիեւին կամ ծայրահեղ դեպքում կարող էին կայացնել նշված անձանց Վրաստանից արտաքսելու որոշում: Տեղի է ունեցել անցանկալին. Վրաստանը պարտվել է: Վրաստանը կորցրել է վայելած վստահությունը: Վրաստանի իշխանությունները գործել են ի վնաս սեփական երկրի եւ ժողովրդի, ի վնաս հարավկովկասյան տարածաշրջանում ժողովրդավարության եւ օրինականության: Հետեւանքները Վրաստանի համար ծանր են լինելու: Այդ բիծը մաքրելու համար պահանջվելու են ժամանակ եւ ահռելի ջանքեր...

# Բաքուն սկսել է կաշառել ԱՄՆ Ավետարանչական եկեղեցու առաջնորդներին

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

**Նյու Յորք**

Ազգային փոքրամասնությունների եւ կրոնական դավանանքների նկատմամբ Ադրբեջանում դրսեւորվող «եզակի հանդուրժողականության» մասին քարոզչական շշափուկները հասել են արդեն ամերիկյան Ավետարանչական եկեղեցիների առաջնորդներին: Վաշինգտոնում Ադրբեջանի դեսպանն իր «twitter»-ի էջում տեղադրել էր ամերիկյան «Էթնիկ փոխըմբռնման զարգացման հիմնադրամի» հղումը (FFEU- The Foundation For Ethnic Understanding), որի փոխանցմամբ, մայիսի 26-ին, Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովը Նյու Յորքում հանդիպել է FFEU-ի նախագահ ռաբբի Մարք Շնիյերի հետ անձնական նախաճաշի սեղանի շուրջ, որին մասնակցել են նաեւ Ամերիկայի Ավետարանչական եկեղեցիների 15 առաջնորդներ «Eagles´ Wings» (Արծվի թեւեր) ընկերության ղեկավար, արքեպիսկոպոս՝ Ռոբերտ Սթիրնի ղեկավարությամբ: «Խորհրդավոր նախաճաշի» ընթացքում ադրբեջանցի դիվանագետները ներկաներին իրազեկել են իրենց երկրում տիրող կրոնական ազատության եւ միջէթնիկական ներդաշնակության մասին, ինչն արտահայտվում է նաեւ Բաքվի հետ առնչություն ունեցող միջազգային բոլոր մակարդակներում: Ի դեպ, դատելով հանդիպումը պատկերող լուսանկարից, նախաճաշին մասնակցել է նաեւ օրեր առաջ անառակության սկանդալի մեջ հայտնված, ՄԱԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցիչ՝ Յաշար Ալիեւը:

Մնում է, իրոք, արժանին մատուցել Բաքվի քարոզչական քաղաքականության հնարամտության եւ ճկունության դրսեւորմանը: Մինչ մենք դիվանագիտական զսպվածություն ենք հանդես բերում, Բաքուն իր հակա-հայկական արշավը իսլամական համաժողովների, հրեական ազդեցիկ շրջանակների միջոցով տարածում է նաեւ՝ ԱՄՆ քրիստոնեական համայնքների վրա:

Հիշեցնենք, որ Ամերիկայի Ավետարանչական եկեղեցին Դ. Թրամփի նախագահական ընտրություններում որոշիչ դեր ունեցավ:

***Խմբ. կողմից*** *էլ ավելացնենք ռաբբի Մարք Շնիյերը մայիսի 4-6-ը մասնակցել եւ շողոքորթել էր Իլհամ Ալիեւին՝ Բաքվում կայացած «Միջմշակութային երկխոսություն» ֆորումին: Այսինքն՝ «գործը» շատ լավ է կպել:*

# Տնտեսական ակտիվությունն այս տարին հուսադրող է՝ ինչպիսի՞ն կլինի տարեկան տնտեսական աճի ցուցանիշը

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հայաստանի տնտեսության եւ երկրի բնակչության կենսամակարդակի որակական փոփոխությունների համար անհրաժեշտ է բարձր տնտեսական աճ՝ սա աքսիոմատիկ ճշմարտություն է: Քիչ հավանական է, եթե չասենք անհավանական, որ 2000-ականների երկնիշ տնտեսական աճը կունենանք այս եւ առաջիկա տարիներին: Սակայն, առնվազն միջին տարեկան 5-6 տոկոս տնտեսական աճ ունենալը իրատեսական է, այլընտրանք պարզապես չունենք՝ թե՛ որպես երկիր զարգանալու, թե՛ մեր տարածաշրջանում ագրեսիվ հարեւաններին դիմակայելու առումներով:

Այս տարվա՝ 2017-ի առաջին 4 ամիսներին, այսինքն՝ տարվա մեկ երրորդի տնտեսական ակտիվության 5,7 տոկոս աճի ցուցանիշը, կարելի է ասել, տեղավորվում է վերոնշյալ անհրաժեշտության շրջանակում: Թեեւ տարեսկզբից տնտեսական ակտիվության ավելի բարձր տեմպ ենք ունեցել՝ հունվարին տնտեսական ակտիվության աճը կազմել էր 6,5 տոկոս, հունվար-փետրվարին՝ 6,2 տոկոս, իսկ հունվար-մարտին՝ 6,6 տոկոս: Այդուհանդերձ, 5,7 տոկոս տնտեսական ակտիվության աճը ցածր ցուցանիշ չէ, իսկ եթե հաշվի առնենք, որ ապրիլին երկու՝ խորհրդարանական եւ Երեւանի ավագանու ընտրություններ են տեղի ունեցել, ապա բնական պետք է համարել տնտեսական ակտիվության աճի նվազումը: Ընտրությունների ժամանակահատվածում սպասողական տրամադրություններ եւ որոշակի պասիվություն է արձանագրվում բոլոր երկրներում, եւ մենք այս առումով բացառություն չենք կարող լինել:

Տնտեսության հինգ ճյուղերից երեքն արձանագրել են աճ, իսկ երկուսը՝ անկում: Արդյունաբերության ծավալներն ավելացել են՝ 12,9 տոկոսով, առեւտրի շրջանառությունը՝ 12,1 տոկոսով, ծառայությունները՝ 10,1 տոկոսով, գյուղատնտեսության համախառն արտադրանքը նվազել է 2,9 տոկոսով, շինարարության ծավալը՝ 13,4 տոկոսով: Ըստ տնտեսության երեք ճյուղերի պատկերը համարժեքորեն արտացոլված է նախորդ տարվա միայն ապրիլ ամսվա համեմատ այս տարվա միայն ապրիլ ամսվա ցուցանիշներում՝ դարձյալ աճ են ունեցել արդյունաբերությունը, առեւտուրը եւ ծառայությունները, անկում՝ գյուղատնտեսությունն ու շինարարությունը: Սակայն այս տարվա նախորդ ամսվա՝ մարտի համեմատ, բացի գյուղատնտեսությունից, բոլոր ճյուղերում էլ անկում է գրանցվել: Գյուղատնտեսության աճն էլ պայմանավորված է սեզոնային գործոնով:

Այդուհանդերձ, առաջիկայում տնտեսական ակտիվության ավելի բարձր աճի ակնկալիքներ կան: Մասնավորապես, գյուղատնտեսական արտադրանքի լավ բերք է սպասվում՝ այս տարի կլիմայական բացասական մեծ ազդեցություններ չեղան, մյուս կողմից էլ՝ շարունակվում են գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերը: Արդյունաբերությունում աճի տեմպը առնվազն կպահպանվի: Ծառայությունների ոլորտը շարունակելու է համարժեքորեն արձագանքել տնտեսության իրական հատվածում դրական զարգացումներին: Նույնը նաեւ առեւտրի շրջանառությունում: Առեւտրի եւ ծառայությունների վրա զգալի ազդեցություն են ունենում նաեւ արտերկրից եկող մասնավոր դրամական փոխանցումները: Դրանք, ըստ ԿԲ տեղեկատվության, այս տարի ավելացել են:

Տնտեսության մյուս կարեւոր ճյուղը՝ շինարարությունը, դեռ գտնվում է անկման մեջ: Այստեղ դրական տեղաշարժեր կարող են գրանցվել միայն, եթե իրագործվեն այն ներդրումային ծրագրերը, որոնք հայտարարվել են կառավարության կողմից եւ որոնք պարբերաբար հետաձգվում են:

**Հարկ է նշել նաեւ, որ բացի տնտեսական աճի բարձր ցուցանիշից, անհրաժեշտ է, որ այն որակական լինի: Այսինքն, աճը տեղի ունենա նախեւառաջ արդյունաբերության եւ գյուղատնտեսության, այլ ոչ թե առեւտրի ծավալների ավելացման շնորհիվ:** Հենց այս ճյուղերն են ապահովում երկրի զարգացումը, որոնք կարելի է ավելացնել նաեւ շինարարությունը, որի աշխուժացումը մեծաթիվ աշխատատեղեր է ապահովում:

Մյուս կողմից էլ արդյունաբերության եւ գյուղատնտեսության զարգացումը պետք է լինի արտահանման ուղղությամբ: Հայաստանը փոքր շուկա է, մենք պարզապես պարտավոր ենք ավելի մեծ ծավալների արտադրանքի թողարկել եւ իրացնել արտերկրում: Այս տարվա 4 ամիսներին, անցյալ տարվանից սկսված, արտահանման բարձր՝ երկնիշ աճի միտումը պահպանվում է: Հատկապես կարեւոր է, որ այդ աճի մեջ աստիճանաբար ավելանում է պատրաստի արտադրանքի մասնաբաժինը: Այսպես, եթե արտաքին առեւտրաշրջանառությունը հունվար-ապրիլին ավելացել է 15,1 տոկոսով եւ կազմել 1 մլրդ 689 մլն դոլար, ապա արտահանումը 1 տոկոսային կետով ավելի բարձր՝ 16,1 տոկոսով է աճել, իսկ ծավալները կազմել են 608 մլն դոլար: Կարելի է ակնկալել, որ առաջիկա ամիսներին արտահանման ծավալների աճը կբարձրանա՝ շնորհիվ գյուղմթերքների մոտալուտ սեզոնի եւ դրանց արտահանման ծավալների ավելացման:

Դեռ վաղ է ասել, թե ինչպիսին կլինի տնտեսական աճի տարեկան ցուցանիշը, բայց ներկայիս միտումները հուսադրող են: Մնում է, որ արտերկից՝ համաշխարհային տնտեսությունից եկող բացասական ազդեցություններ չլինեն, իսկ երկրի ներսում էլ՝ ներքաղաքական բախումներ: Դրանց բացասական արձագանքը անմիջական է լինում՝ ի տարբերություն դրական անդրադարձի, որի համար լուրջ ջանքեր, ժամանակ եւ կայուն զարգացման տեմպեր են պահանջվում:

# Բարձր գնաճ չի ակնկալվում՝

## ԿԲ-ն դարձյալ անփոփոխ թողեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը

Քննարկելով առկա տնտեսական ցուցանիշները, մայիսի 16-ին ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը այս տարվա մեջ երկրորդ անգամ որոշել է անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 6 տոկոս: Մինչեւ այս տարվա փետրվար ամիսը, վերջին 1-2 տարվա ընթացքում, ԿԲ-ն պարբերաբար իջեցնում էր վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Մասնավորապես, սկսած 2015-ի օգոստոսից, երբ վերաֆինանսավորման տոկոսադրույքը 10,5 տոկոս էր, գլխավոր դրամատունը 12 անգամ եւ ընդհանուր առմամբ՝ 4,5 տոկոսային կետով իջեցրել է այն: Անդրադառնանք թե ինչի՞ համար է ԿԲ-ն իջեցնում, բարձրացնում կամ անփոփոխ թողնում վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

Վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխման միջոցով ԿԲ-ն ազդում է մի կողմից գնաճի վրա, մյուս կողմից՝ տնտեսական ակտիվության կամ աճի: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվում է գնաճի զսպման նպատակով, քանի որ խստացվում են դրամավարկային պայմանները եւ դանդաղում է տնտեսական ակտիվությունը: Եթե գնաճը զսպելու խնդիր չի լինում, ինչպես դա տեղի էր ունենում անցած մեկ-երկու տարվա ընթացքում, երբ Հայաստանում գնանկում էր արձանագրվում, վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցվում է: Դա նպաստում է դրամավարկային պայմանների բարելավմանը, հետեւաբար եւ տնտեսական աճի խթանմանը: Ի դեպ, որպեսզի սխալ տպավորություն չստեղծվի, նշենք, որ սա չի նշանակում, որ տնտեսական աճի կամ գնաճի փոփոխությունները բացառապես վերաֆինանսավորման տոկոսադրույքով են փոփոխվում: Այն միայն որոշակի ազդեցություն է գործում արդեն տեղի ունեցող տնտեսական գործընթացների վրա:

Այս անգամ վերաֆինասավորման տոկոսադրուքը անփոփոխ թողնելու պատճառը գնաճի ցուցանիշներն են: Ըստ ԿԲ հաղորդագրության, 2017 թ. ապրիլին արձանագրվել է 1 տոկոս գնաճ՝ նախորդ տարվա նույն ամսվա 0,3 տոկոս գնանկման դիմաց, որը պայմանավորվել է գյուղմթերքների գների ավելի բարձր մակարդակով: Այս պարագայում 12-ամսյա գնաճը ապրիլի վերջի դրությամբ կազմել է 1,2 տոկոս: Այսինքն, գնանկումը դադարել է, ինչը թույլ է տվել ԿԲ խորհրդին գնահատել, որ կանխատեսվող հորիզոնում գնաճը կշարունակի վերականգնվել՝ կայունանալով նպատակային ցուցանիշի շուրջ: Նպատակային ցուցանիշը 4 տոկոս + - 1,5 տոկոս միջակայքն է:

Անդրադառնալով արտաքին հատվածից եկող ազդեցություններին, ԿԲ խորհուրդը մատնանշել է, որ համաշխարհային տնտեսության աճի հեռանկարները բարելավվում են, իսկ միջազգային ապրանքային շուկաներում պահպանվում են գնաճային զարգացումները: Այդուհանդերձ, ԿԲ խորհուրդն առաջիկա ամիսներին արտաքին հատվածից միայն չափավոր գնաճային ազդեցություններ է ակնկալում:

Ներքին տնտեսական կացության առնչությամբ արձանագրվել է, որ 2017 թ. առաջին եռամսյակի արդյունքներով դիտվել է տնտեսական ակտիվության բավականին բարձր աճ, որը հիմնականում պայմանավորվել է արդյունաբերության, մատուցված ծառայությունների եւ առեւտրի ոլորտներում գրանցված բարձր աճերով: Դրան զուգահեռ, կառավարության եւ ԿԲ խթանող դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականությունների ազդեցությամբ շարունակվել է վերականգնվել ներքին պահանջարկը:

Վերոնշյալ գործոններից ելնելով էլ, Կենտրոնական բանկը նպատակահարմար է գտել անփոփոխ թողնել դրամավարկային պայմանները, նշելով, որ գնաճային ռիսկերն այս պահին հիմնականում հավասարակշռված են:

Այսպիսով, գնաճի, տնտեսական աշխուժության եւ պահանջարկի աստիճանական վերականգնման պայմաններում Կենտրոնական բանկն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Այսինքն, ներկա պահին առկա է որոշակի հավասարակշիռ իրավիճակ, երբ գնաճի տեմպը դեռ ցածր է, բայց արդեն դուրս է եկել գնանկումից, մյուս կողմից էլ՝ տնտեսական ակտիվության տեմպը որոշակիորեն բարձրացել է՝ 6,6 տոկոս եռամսյակի (5,7 տոկոս չորս ամիսների-Ա. Մ.) արդյունքներով: Հետեւաբար, հրատապ անհրաժեշտություն մի երեւույթի հաշվին մյուսը խթանելու կամ զսպելու, այս պահին չկա: Այսինքն, ԿԲ-ն այս պահին միջամտության եւ վերոնշյալ գործիքի կիրառման անհրաժեշտություն չի տեսնում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Որքա՞ն զբոսաշրջիկ ենք ընդունել, որքա՞ն են գնացել որպես զբոսաշրջիկ



**Ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է այս տարվա առաջին եռամսյակում Հայաստան այցելած զբոսաշրջիկների եւ Հայաստանից որպես զբոսաշրջիկ արտերկիր մեկնածների թվերը: Համաձայն այդ հրապարակումների, 2017 հունվար-մարտին Հայաստան է ժամանել 298 533 զբոսաշրջիկ, կամ 2016-ի նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 18,2 տոկոսով ավելի:**

**Այս անգամ վիճակագրական ծառայությունը առանձնացրել է հյուրանոցներում հանգրվանածներին եւ բարեկամի տանը կամ վարձով բնակարանում հանգրվածներին: Համաձայն այդ տվյալների, Հայաստան այցելածներից 41 696 մարդ հանգրվանել է հյուրանոցային տնտեսություններում՝ ինչը 36,2 տոկոսով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իսկ 256 837-ը՝ բնակվել են բարեկամի տանը կամ վարձով, ինչը 15,8 տոկոսով է ավելի նախորդ տարվա նույն ժամանակահատվածից: Այդուհանդերձ, Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության չափանիշներով բոլորն էլ համարվում են միջազգային զբոսաշրջիկ (անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական,կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ եւ ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով):**

**Ըստ հյուրանոցային տնտեսության օբյեկտներից ստացված հաշվետվությունների, նշված ժամանակահատվածում ՀՀ այցելած զբոսաշրջիկների 26,1 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 14,2 տոկոսը՝ ԵՄ երկրներին եւ 59,7 տոկոսը՝ այլ երկրների:**

**Ինչ վերաբերում է Հայաստանից արտերկիր մեկնող զբոսաշրջիկներին, ապա 2017-ի հունվար-մարտին նրանց թիվը կազմել է 266 324 մարդ կամ 2016-ի համապատասխան ժամանակաշրջանի համեմատ՝ 17,1 տոկոսով ավելի: Հայաստանից զբոսաշրջության նպատակով մեկնողները գրեթե ամբողջությամբ դա արել են ինքնուրույն, եւ զբոսաշրջային գործակալությունների միջոցով արտերկիր մեկնել է ընդամենը 498 մարդ:**

Ա. Մ.

AZG NEW SHABAT.QXD 31/05/2017 21:45 Page 4



ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Դետրոյթ, ԱՄՆ

# Էրդողանը Վաշինգտոնն է արտահանում իր սարսափի գործելաոճը

Շատ տարագաներում Մ. Նահանգների զանգվածային լրատվամիջոցները եւ ընդհանրապես հանրությունը կարճատեսություն են ցուցաբերում այն ամենի հանդեպ, ինչը կատարվում է Ամերիկայի սահմաններից դուրս: Թուրքիայի վայրագ գործելակերպը երկրի ներսում եւ նրա միջազգային գործողությունները ամերիկացիների մեծամասնության անտարբերությանն են արժանանում: Նրանք բավականանում են հիմնականում լսելով այն հորդորները, որ Թուրքիան Ամերիկայի «վստահելի դաշնակիցն է»: Դրանով նրանք անվտանգ են զգում իրենց: Թուրքական կառավարության որեւէ գործողություն կամ սխալ եւ կամ վաս վարքագիծ առանձնապես մտահոգության առարկա չի դառնում: Լրատվամիջոցներն էլ, իրենց հերթին, նպաստում են այդ անտարբերությանը, որն աշխարհի այլ վայրերում կարող է հազարավոր անմեղ մարդկանց մահվան պատճառ դառնալ:

Նման վերաբերմունքը առկա էր Մ. Նահանգներում մինչեւ նախանցյալ շաբաթ, երբ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիբ Էրդողանը ժամանեց Վաշինգտոն, իր հանդուգն, «մաչոիստական» կեցվածքով՝ ոտնակոխ անելու համար Մ. Նահանգների քաղաքացիների սահմանադրական իրավունքները եւ Ամերիկա արտահանելու համար իր սարսափի մարտավարությունը: Նրա երկար սպասված այցելությունը Վաշինգտոն ձախողվեց՝ քաղաքի փողոցներում բռնկված անակնկալ իրադարձությունների հետեւանքում:

Էրդողանի այցելության օրակարգի գլխավոր հարցը պահանջելն էր Ամերիկայից, որ դադարեցնի ռազմական օժանդակություն ցուցաբերել Սիրիայում «Իսլամական պետության» դեմ պայքարող քուրդերին: Սիրիական ճգնաժամի ամբողջ ընթացքում Միացյալ Նահանգների վարչակազմը համոզվել էր, որ Սիրիայի քրդերն են ամենավստահելի ու արդյունավետ պայքարողներն ընդդեմ Ռաքքայի խալիֆայության, որի «կնքահայրն» է Էրդողանը:

Այսպիսով, Մ. Նահանգների քաղաքականությունը, հենվելու՝ առնվազն պատերազմի այս փուլում, քրդերի վրա հակասում էր Էրդողանի քաղաքականությանը եւ ծրագրերին: Հակառակ, սակայն, գործի դրված բոլոր միջոցներին, Անկարան չկարողացավ տարհամոզել Թրամփի վարչակազմին: Վաշինգտոն կատարած Էրդողանի այցը այդ քաղաքականության վերջին հուսահատ քայլն էր, որն ամբողջությամբ ձախողվեց:

Հակառակ իրար հասցեին ուղղված հաճոյախոսություններին, Թրամփի վարչակազմը մազաչափ անգամ չզիջեց, իսկ Էրդողանն իր զայրույթն արտահայտեց Վաշինգտոնի փողոցներում, խուլիգանությամբ:

Էրդողանի Վաշինգտոն կատարած ամեն մի այցելություն ուշագրավ երեւույթ է դառնում: Անցյալ տարի նրա ելույթը Բրուկինգզ ինստիտուտում ավարտվեց աղմկալի վեճով, Մուհամմեդ Ալիի թաղման արարողության ժամանակ նրա ներբողական հյուսելու փորձը տապալվեց, եւ նա լքեց Մ. Նահանգները առանց պաշտոնական ձեւականությունների:

Այս տարվա այցելությունը առավել մռայլ էր եւ նրա բարկությունը իր թիկնապահների միջոցով այլախոհների դեմ կռվի վերածվեց Ազատության երկրում:

Աշխարհի պետությունների շատ առաջնորդներ այցելում են Մ. Նահանգներ եւ երբեմն արժանանում են թշնամական ցույցերի, սակայն նրանցից ոչ մեկը չի կորցնում իր արժանապատվությունը ցուցարարների հետ փոխադարձ կռվի բռնվելու համար:

Ջենգիզ Չանդար անունով վետերան թուրք մի լրագրող «Turkey Pulse» (Թուրքիայի զարկերակ) թերթում նկարագրելով Էրդողանի ձախողված այցը Վաշինգտոն, գրում է «լեռը երկնեց՝ մուկ ծնեց»: Սակայն, դիվանագիտական սկանդալը շատ ավելի մեծ էր, քան մուկը: Երկու ցույցեր ընդդեմ իր այցելության ավարտվեցին արյունալի բախումներով: Թուրքիայի դեսպանի բնակարանի առաջ մայիսի 16-ին կազմակերպված ցույցը վերածվեց մեղադրական բանավեճի թուրք եւ ամերիկացի՝ կարգապահությունը պահպանող պաշտոնյաների միջեւ եւ 9-ը հոգի հիվանդանոց փոխադրվեցին:

Տեսաժապավենները արձանագրեցին Էրդողանին ցուցումներ տալիս իր գաղտնի ծառայությունների թիկնապահներին, որ հարձակվեն խաղաղ ցուցարարների վրա, որոնց թվում էին քուրդեր, հայեր եւ եզդիներ, որոնք պատմականորեն եւ մինչեւ օրս ենթարկվել են թուրքական բռնություններին ու վայրագություններին:

Այնքան ժամանակ, որ Էրդողանը մնում էր Անկարայում իր սուլթանական գահի վրա, նրա գործողությունները քիչ մտահոգություն էին առաջացնում: Բայց հենց նա իր իսկական դեմքը ցույց տվեց Ամերիկայի տարածքում, ներկայացուցիչների պալատի, սենատի եւ նույնիսկ պետքարտուղարության պաշտոնյաները չէին կարող լուռ մնալ:

Ամենակոպիտ, ոչ-դիվանագիտական արձագանքը հնչեցրեց սենատոր **Ջոն Մքքեյնը** (Հանրապետական, Արիզոնայից), որ հայտարարեց. «Սա Ամերիկայի Միացյալ Նահանգներն է: Նման բան մենք չենք անում այստեղ: Ավազակային նման վարքագիծը ոչ մի արդարացում չունի»: Նա նաեւ կոչ արեց Մ. Նահանգներից վտարել Թուրքիայի դեսպանին:

Ի դեպ, Տեխասի օրենսդիր մարմինները նախորդ շաբաթ բանաձեւ ընդունեցին ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Շատ հավանական է, որ դա Էրդողանի պարսավելի ամբարտավանության դեմ ուղղված քայլ էր:

Գիտակցելով, որ դիվանագիտական հաճոյախոսությունների ժամանակներն այլեւս անցել են, պետքարտուղարությունը եւս մարտահրավեր նետեց: Իր հայտարարության մեջ նա դատապարտեց կատարվածը, համարելով այն հարձակում ազատ խոսքի արտահայտման դեմ եւ զգուշացրեց Թուրքիային, որ նման արարքը հանդուրժելի չէ: «Մենք հնարավոր ամենախիստ ձեւով մեր մտահոգությունն ենք հայտնում Թուրքիայի կառավարությանը», նշեց պետքարտուղարության խոսնակ **Հեթեր Նոերտը**:

Իսկ ներկայացուցիչների պալատի արտաքին գործերի հանձնախմբի նախագահ **Էդուարդ Ռոյը** (Հանրապետական, Կալիֆոռնիայից) ասաց. «Օտար կառավարությունների գործակալները երբեք անձեռնմխելի չպետք է համարվեն հանցավոր արարքների համար»: Գլխավոր դատախազ՝ Ջեֆ Սեշընզին ուղղված իր նամակում նա շտապ հետաքննություն պահանջեց անցկացնել եւ «համապատասխան մեղադրանք» առաջադրել մեղավորներին, նախքան, որ ավտանգության աշխատողները հեռանան երկրից:

Իր հերթին, Էրդողանի կառավարությունը մեղադրեց Մ. Նահանգներին «պատշաճ անվտանգություն» չապահովելու համար, եւ դարձյալ էժանագին հակահարձակումների անցավ՝ ցուցարարներին բնորոշելով որպես PKK-ի կողմնակիցների: Անկարան Մ. Նահանգների դեսպանին կանչեց իր բողոքը ներկայացնելու համար:

Հակառակ գոտկատեղից ներքեւ խփելու իր սովորության, նախագահ Դոնալդ Թրամփը բացարձակ լռություն պահպանեց, հավանաբար ենթադրելով, որ հարցը վերաբերում է պետքարտուղարությանը:

Բայց «Բոստոն Գլոբը» արդարացի չգտավ այդ լռությունը եւ իր խմբագրականը վերնագրելով «Թրամփի ամոթալի լռությունը թուրքական բողոքի հանդեպ», թերթը խիստ քննադատեց նախագահին: «Բոստոն Գլոբը» հայտարարեց. «Նախագահ Թրամփը ոչ մի խոսք չունի ասելու այն բանից հետո, երբ Թուրքիայի անվտանգության մարմինների աշխատողները վայրագաբար հարձակվեցին ցուցարարների վրա, որոնք Վաշինգտոնում փողոց էին դուրս եկել: Դա պարսավանքի արժանի է»:

Չնայած Էրդողանի այցելությունը շատ բան չտվեց իր երկրին, այդուհանդերձ, իր իրական դեմքի բացահայտումը ցույց տվեց, թե ինչ է կատարվում Թուրքիայում, որտեղ իր ներքին քաղաքականության հետեւանքով միլիոնավոր մարդիկ են ճնշման ենթարկվում: Բայց կարծես այդքանը բավական չէր, նա նաեւ փորձեց իր բռնատիրական իշխանությունը բանեցնել ամերիկացի քաղաքացիների վրա:

Այս այցելությունը իսկական դաս հանդիսացավ ամերիկացի քաղաքագետների եւ լրատվամիջոցների համար, որոնք իրենց մաշկի վրա զգացին Էրդողանի վայրագությունը: Դա նաեւ դաս էր ամերիկացի քաղաքացիների համար, որոնց անտարբերությունը լռելյայն խրախուսում է այն բռնությունները, որոնց ենթարկվում են միլիոնավոր անմեղ մարդիկ Մ. Նահանգների հովանավորած երկրների կառավարությունների կողմից:

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**
**The Armenian Mirror-Spectator**




ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ստեփանակերտ

## Հաջիեւի նոու-հաուն

Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ բանակցություններից հետո Կիպրոսի արտգործնախարար **Կուսուլիդեսը** հայտարարել է, որ չի կարելի զուգահեռներ անցկացնել «Հյուսիսային Կիպրոսի» եւ Արցախի միջեւ, քանի որ ի տարբերություն առաջինի, որը Թուրքիայի կողմից բռնազավթված է, «Արցախը հայերի պատմական տարածքն է»: Այդ առթիվ haqqin.az-ը մայիսի 30-ին կարճ տեղեկատվություն էր տարածել եւ հավելել, որ «մոտակա ժամերին սպասում է» Ադրբեջանի ԱԳՆ արձագանքին: (https://haqqin.az/news/101452)

Օրվա ընթացքում, սակայն, հակառակորդի արտաքին քաղաքական գերատեսչությունը լուռ մնաց: Միայն մայիսի 31-ին նույն լրատվամիջոցը փոխանցեց ԱԳՆ մամուլի խոսնակի պատասխանը, որը ստանդարտի մեջ ունի մի նրբերանգ: Քննադատելով Կիպրոսի ԱԳ նախարարին, ադրբեջանցի պաշտոնյան հարկ է համարել դիտել տալ, որ Կիպրոսի հյուսիսում «դարեր ի վեր ապրում են թուրքեր, որոնք նույնպես ունեն ինքնորոշման իրավունք»:(https://haqqin.az/news/101486)

Այս դիտարկումը պատահական համարել չի կարելի: Ադրբեջանի ԱԳՆ-ում, հավանաբար, երկար են մտածել, թե ինչ պատասխանեն եւ եկել եզրահանգման, որ ամենաճիշտը Կիպրոսին «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» ճանաչման հավանականության մասին ակնարկը կլիներ:

Սա դիվանագիտական նոու-հաու կարելի է համարել, քանի որ ստացվում է այսպես. եթե Կիպրոսը համարում է, որ Արցախը հայերի պատմական տարածք է եւ ունի ինքնորոշման իրավունք, ապա նույնը վերաբերում է նաեւ կղզի պետության հյուսիսային շրջանի էթնիկ թուրքերին: Ավելի պարզ ասած, Ադրբեջանը Կիպրոսի հյուսիսային հատվածը ճանաչում է որպես «թուրքերի պատմական տարածք»:

Դժվար է ասել, թե Կիպրոսի ԱԳ նախարարի հայտարարությունը Բաքվում հասկացել են որպես այդ երկրի կողմից Արցախի անկախության ճանաչման պատրաստակամության դրսեւորում, բայց «Հյուսիսային Կիպրոսի» մասին Ադրբեջանի ԱԳՆ մամուլի խոսնակի ակնարկից հենց դա է հասկացվում: Տվյալ դեպքում դա նաեւ արդարանալու ենթատեքստ ունի. գաղտնիք չէ, որ Ադրբեջանը «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» հետ ունի բազմակողմ հարաբերություններ: Իհարկե՝ Թուրքիայով միջնորդավորված, բայց դա ոչինչ չի փոխում: Փաստն այն է, որ բոլոր պետությունների տարածքային ամբողջականությունը «հարգող» Ադրբեջանը գործնականում ճանաչում է «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը»: Ադրբեջանի ԱԳՆ անհանգստությունն այս իմաստով հասկանալի է. Բաքուն չի բացառում, որ Կիպրոսն էլ կարող է Հայաստանով միջնորդավորված, բայց փաստացի ուղղակի կապեր հաստատել Արցախի հետ: Ստացվում է, որ Ադրբեջանը, կամա թե ակամա, դրդում է, որպեսզի Արցախի միջազգային ճանաչման գործընթաց սկսվի: Դա, երեւի, փրկություն կլիներ Ալիեւի համար, քանի որ նրան կտար սեփական հանրության առաջ արդարանալու հնարավորություն:

AZG NEW SHABAT.QXD 31/05/2017 21:45 Page 5



ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Հենրիխ Մխիթարյա՞ն, թե՞ Ռուբեն Հայրապետյան




Այն ժամանակ, երբ Հենրիխ Մխիթարյանին նախագահ Սերժ Սարգսյանը պարգեւատրում էր «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանով՝ Հայաստանը լավագույնս ներկայացնելու համար միջազգային ֆուտբոլում, հայտնի դարձավ, որ ռուսաստանաբնակ գործարար Արթուր Սողոմոնյանը գնել է Երեւանի «Փյունիկ» ֆուտբոլային ակումբը: Գնել է, ուշադրություն, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանից: Թե որքա՞ն է արժանացել անկախ Հայաստանի ամենատիտղոսակիր թիմի վաճառքի գործարքը, հայտնի չէ, հայտնի է միայն այն, որ Սողոմոնյանը չի բացառել, որ «Փյունիկ»-ն այլեւս «Փյունիկ» չկոչվի:

Այս պատմությունը, սակայն, թող ների ինձ «Փյունիկ»-ի երկրպագուները, այդ թիմի մասին չէ: Ուրեմն պարզվում է, դե այսինքն մենք մինչ այս չգիտեինք եւ հիմա իմացանք, որ «Փյունիկը» պատկանել է ՀՖՖ նախագահին: Պատկերացրեք, օրինակ «Մանչեսթեր Յունայթեդը» պատկանում է Անգլիայի ֆուտբոլային ֆեդերացիայի նախագահին, որն, ի դեպ, կազմակերպում է Անգլիայի ֆուտբոլի առաջնությունը, նշանակում մրցավարներ, եւ կամ «Բարսելոնա»-ն պատկանում է Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահին ու նա նշանակում է մրցավար՝ «Ռեալ» Մադրիդ-«Բարսելոնա» խաղի համար: Չգիտեմ դուք ինչպես, բայց ՖԻՖԱ-ում եւ ՈւԵՖԱ-ում նման բաներ չեն պատկերացնում, քանի որ միջազգային ֆուտբոլում նման բաներ չկան:

Ինքը՝ Ռուբեն Հայրապետյանը, ըստ որոշ տեղեկությունների, տեղափոխվում է Արցախ: Սա չի նշանակում, որ նա հրաժարվում է ՀՖՖ նախագահի պաշտոնից, սա նշանակում է, որ ՀՖՖ-ն ղեկավարվելու է Արցախից, ինչը, ըստ այս տեղեկությունը հաղորդողի՝ «ծանր ապտակ է Ալիեւ կրտսերի անհիմն ամբիցիաներին», ավելին, ինչպես պնդում է ՀՖՖ նախագահի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին շատ իրազեկը՝ «Հայրապետյանի նման պահվածքը կարող է լավ օրինակ ծառայել եւ խորը հարգանքի է արժանի»: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, թե ինչ է արել կամ պատրաստվում անել Հայրապետյանը Արցախում: Պարզվում է Հայրապետյանն Արցախում մի քանի միլիոն դոլարի ներդրում է արդեն իսկ կատարել, որի արդյունքում, ուշադրություն, Հայրապետյանը Շուշիում կառուցել է շքեղ առանձնատուն՝ իր համար եւ խոշոր ռեստորանային համալիր, որտեղ, ճիշտ է, աշխատելու են արցախցիները, բայց կրկին՝ իր համար:

Մի խոսքով, մինչ Մխիթարյանը պարգեւատրվում էր հայրենիքին մատուցած ծառայությունների համար, Հայրապետյանն այդ ծառայությունները մատուցում էր հայրենիքին, գուցե՝ պարգեւատրվելու հույսով:

Կատակը մի կողմ՝ հայկական ֆուտբոլը անձնավորվել է: Լավագույն դեպքում այն Հենրիխ Մխիթարյանն է, վատագույն դեպքում՝ Ռուբեն Հայրապետյանը: Առաջ՝ Երեւանի «Արարատ»-ն էր, այսօր՝ անգամ Հայաստանի հավաքականը չէ: Իսկ ֆուտբոլն անհատական զբաղմունք չէ: Իհարկե չի բացառվում, որ շատ երեխաներ, տեսնելով Հենոյին, նրա գոլերը, նրա մեծարումը, իրենք էլ ձգտեն ու դառնան եվրոպական մակարդակի ուժեղ ֆուտբոլիստներ եւ մենք վերջապես ունենանք ֆուտբոլի հավաքական ընկալում: Բայց սրան զուգահեռ, շատ հնարավոր է, որ շատ երեխաներ որոշեն շատ հարստանալ, գնալ Շուշի, այնտեղ շքեղ առանձնատուն կառուցել, կողքին էլ՝ ռեստորանային համալիր ու այդկերպ զարգացնել հայկական ֆուտբոլը: Չէ՞, որ դա էլ, ինչպես ասում են՝ ընդօրինակելի է եւ խորը հարգանքի արժան:

Հայ երեխաների այս ընտրությունից է կախված հայկական ֆուտբոլի ապագան: Ի դեպ, նկատե՞լ եք, որ հայկական ֆուտբոլի մասին միշտ խոսում ենք ապագայով... Չնայած՝ ինչո՞ւ միայն ֆուտբոլի ապագան եւ ինչո՞ւ միայն ֆուտբոլի մասին:

# Մարդասիրությունը հաբոնիմանա չէ, այլ՝ բարանկիցե

**Եւ այսպես, Թոմ Քաթինա: Այսուհետ աշխարհում, իսկ եթե շատ անկեղծ լինենք՝ աշխարհում հայերի եւ մեր բարեկամների շրջանակում, առնվազն մեկ տարով, մինչեւ «Ավրորայի» 2018-ի մրցանակաբաշխությունը, մարդասիրությունը կապվելու է այս անվան հետ: Սուդանի Նուբայի լեռների միակ բժիշկը, մարդ, ով թողել է հայրենի ԱՄՆ-ում ամեն ինչ եւ ոչ թե, օրինակ, եկել Հայաստան ու մտել քաղաքականություն, այլ գնացել է Նուբայի լեռներ ու զբաղվել բառիս բուն իմաստով մարդկանց փրկելով: Ընդ որում Նուբայի լեռներում ապրում է շուրջ 750 հազար մարդ, ու Թոմ Քաթինան այդ մարդկանց համար հրեշտակ է, իսկական, ոչ նրանցից, որոնց մասին մենք կարդում ենք Աստվածաշնչում:**

**Ավրորայից բժիշկ Թոմը ստանալու է 100 հազար ԱՄՆ դոլար, որպեսզի անի այն, ինչ ինքն է ուզում եւ եւս 1 մլն դոլար, որպեսզի իր համար վստահելի կազմակերպությունների միջոցով շարունակի զբաղվել իր գործով: Քաթինան, որն ամենեւին էլ միլիոնատիրոջ պես չէր հագնված, արդեն իսկ նշել է, որ անձամբ իրեն շնորհված 100 հազար դոլարն էլ ուղղելու է Նուբայի լեռներում հիվանդանոցի վերազինմանը, որտեղ, ի դեպ, նրան փոխարինելու էին գնացել երեք հայ բժիշկներ, որպեսզի բժիշկ Թոմը կարողանա մասնակցել Ավրորայի մրցանակաբաշխությանը:**

**Հայաստանում, ինչպես նշել է Թոմը, նա իրեն զգացել է ինչպես իր տանը, ընտանիքի անդամների հետ՝ խոհանոցում կերակուր պատրաստելիս. այդքան ջերմացած: Ի դեպ, Քաթինան ունի 5 եղբայր եւ մեկ քույր: Ամուսնացել է մեկ տարի առաջ, հենց Նուբայի լեռներում, տեղացի Նասիմա անունով կնոջ հետ: Ընդ որում, համաձայն տեղական օրենքի, Թոմը հարսնացուի ընտանիքին վճարել է գլխագին՝ 7 կով, 15 այծ: Նասիմայի ընտանիքն էլ ամենեւին դեմ չի եղել, որ իրենց աղջիկն ամուսնանա կողմնակի եկամուտ չունեցող ազնիվ բժշկի հետ եւ աչք է փակել այն հանգամանքին, որ Թոմը, Նուբայի լեռներում բժիշկ աշխատելով, ամսական ստանում է 350 ԱՄՆ դոլար: Ճիշտ է, շատ հնարավոր է, որ հիմա Նասիմայի ծնողները փորձեն համոզել Թոմին, որ նա հարուստ Հայաստանից բերած ահռելի փողերով մի շքեղ առանձնատուն կառուցի Նուբայի ամենաբարձր լեռնագագաթի վրա, կողքին էլ մի կազինո ու եկեղեցի, բայց Թոմը, կարծում եմ, չի համաձայնվի. Թոմը մարդասեր է:**

**Ճիշտ Մարգարիտ Բարանկիցեի պես, որը նույնպես ներկա էր «Ավրորայի» այս տարվա մրցանակաբաշխությանը, որպես «Ավրորայի» 2016-ի դափնեկիր եւ պարզապես մարդասեր: Հենց տիկին Բարանկիցեն էլ ասել է մի բան, որը թերեւս լավագույնն է սահմանում մարդասիրությունը: «Մարդասիրությունը ձնագնդի պես է. տարածվում է», ասել է տիկին Բարանկիցեն: Իմիջիայլոց, Բարանկիցեն տիկին Մարգարիտի սկզբնական ազգանունը չի եղել: Նրա հայրը, որը Բարանկիցե էր, մահանում է քաղցկեղից, այն ժամանակ, երբ Մարգարիտը դեռ շատ փոքրիկ էր: Մայրն էլ դստերը տալիս է իր ազգանունը՝ Հաբոնիմանա, Մարգարիտ Հաբոնիմանա: Հաբոնիմանա՝ նշանակում է «Աստված հետեւում է»: Բայց պապի հորդորով՝ Մարգարիտի մայրը վերականգնում է դստեր, թույլ տվեք, իսկական ազգանունը, եւ նա կոչվում է Բարանկիցե, որն էլ նշանակում է՝ «Ինձ ուզում եք»: Այս սովորական թվացող անվանափոխության մեջ, կարծում եմ, մեծ իմաստ կա, քանի որ մարդասիրությունը, պարզվում է, ոչ թե այն է, ինչ կատարվում է, երբ Աստված է հետեւում, այլ այն է, ինչն ուզում ենք բոլորս: Ինչեւէ, տիկին Բարանկիցեի կարծիքով մարդասիրությունը ձնագնդի պես է. տարածվում է: Դա իհարկե այդպես է, բայց մարդասիրությունը ձնագնդի պես է ոչ միայն այն պատճառով, որ տարածվում է, այլ քանի որ որոշակի կիզիչ պայմաններում՝ հալչում-հոսում է: Այս մասին Բարանկիցեն եւ Քաթինան իհարկե ոչինչ չեն ասել, բայց մենք, որ ամեն օր մարդասիրության քննություն ենք հանձնում տնից դուրս գալիս, մեքենա վարելիս, հետիոտնի համար նախատեսված տեղով անցնելիս, բարձունքներում անձեռնմխելի դղյակներին նայելիս, դրանց տակ անտաղանդ կամ տաղանդավոր մուրացկանների առատությունից, հիվանդանոցներում հերթ կանգնելիս, այնտեղ պառկելիս, խանութից առեւտուր անելիս, եկեղեցի մտնելիս, եկեղեցում, աշխատավայրում, հարազատին փող տալիս կամ վերցնելիս, ամենքի հետ եւ ամենուր՝ այս երկրում, որը մարդասիրության կենտրոնն է դառնում, հո գիտե՞նք, որ մարդասիրությունը կիզիչ պայմաններում հալչում-հոսում է՝ ձնագնդի պես:**

**Մարդասիրությունը դարձել է մրցանակի արժանի բան: Ավրորայի նախաձեռնողներից՝ Ռուբեն Վարդանյանն էլ երազում է, որ գա մի ժամանակ, երբ մարդասիրության մրցանակ շնորհելու անհրաժեշտություն չլինի: Իսկ մինչ այդ ժամանակները վրա հասնեն կամ այդ ժամանակները մոտեցնելու համար, խնդրում եմ, մարդասիրության համար մրցանակներ հանձնենք, սկսելով՝ յուրաքանչյուրս մեր տնից: Օրինակ՝ ամեն կիրակի, երբ բոլորով տանն ենք, երեկոյան ինչ-որ ժամի քննարկենք, թե անցնող շաբաթ ընտանիքի անդամներից ով՝ ինչ է արել, որը կարող է մտնել մարդասիրության շրջանակներում: Ու հաղթող ճանաչել մեկին: Պարտադիր չէ «Ավրորայի» պես շուքով, հաղթողի անունը հրապարակելու համար Շառլ Ազնավուրին հրավիրելով, բավարար կլինի նրա երգերը միացնելը, հիշելով, որ մարդասիրությունը սկսվում է սեփական անձից. ներում մարդուն՝ գազանից նախապատվություն տալուց, մարդ մնալով եւ չմոռանալով, որ մարդասիրությունը հաբոնիմանա չէ, այլ՝ բարանկիցե:**

Հ. ԱՖՅԱՆ

# Վրացի սահմանապահները երազ են տեսել

Եթե դու ադրբեջանցի ես, ապա արդեն խնդիրներ ունես, առնվազն մարդու իրավունքների եւ ազատ խոսքի հետ կապված, գոնե Եվրոպայում: Եթե դու ոչ միայն ադրբեջանցի ես, այլ նաեւ լրագրող եւ ուզում ես ազատ խոսել, ուրեմն խնդիրներ ունես հենց Ադրբեջանում, ինչպես նաեւ կինդ ունի, ծնողներդ ունեն, երեխաներդ, անգամ աներորդիդ, կամ փեսադ: Իսկ եթե դու ադրբեջանցի լրագրող ես, ում ազգանունն է Մուխտարլի... Բայց սկզբից սկսենք, մանավանդ, որ մեզանից ոչ ոք ադրբեջանցի չէ, այն էլ մուխտարլի:

Մայիսի 29-ի երեկոյան, Թբիլիսիի իր տնից դուրս է գալիս ադրբեջանցի լրագրող Աֆղան Մուխտարլին՝ հավանաբար գործերով: Մի քիչ քայլում է երեկոյան Թբիլիսիում եւ ժամը 20:00-ի կողմերը հասնում տեղի հայտնի Կոլտնտեսության հրապարակի սրճարան, որտեղ կա՛մ պատահաբար, կա՛մ պայմանավորված հանդիպում է իր վաղեմի ընկերոջը՝ նորից ադրբեջանցի Դաշգին Աղալարլիին: Ի դեպ, վերջինս պատահական մարդ չէ, ակտիվիստ է, որն ուզում է քաղաքական ապաստան ստանալ Վրաստանում: Ու չնայած Դաշգինն ու Աֆղանը ընկերներ են, բայց այդ հանդիպումը առավելաբար գործնական բնույթ ուներ, քանի որ Աֆղանը լրջորեն ուսումնասիրում է Վրաստանում ադրբեջանցի քաղաքական հալածյալներին եւ նրանց մասին մի մեծ ռեպորտաժ է արդեն իսկ հրապարակել JAMnews լրատվամիջոցում: Մի խոսքով: Զրույցի վերջում, Դաշգինի վկայությամբ, Աֆղանը զանգահարում է տուն եւ կնոջն հարցնում, թե ի՞նչ է տան համար հարկավոր: Կինն էլ ասում է՝ «հաց կբերես»: Ապա երկու ընկերները դուրս են գալիս սրճարանից, ի դեպ, պարզ չէ, թե ո՞վ է փակում հաշիվը: Դաշգինը պատմում է, որ քայլելով հասնում են կանգառ, որտեղով անցնում էր Դաշգինի երթուղայինը, իսկ Աֆղանը պետք է փողոցն անցներ: Ընկերներն իրար հրաժեշտ են տալիս, սկզբում գալիս է Դաշգինի երթուղայինը, ապա Աֆղանը գնում է:

Մի քանի ժամ անց Թբիլիսիի ոստիկանությունը ստանում է դիմում տիկին Լեյլա Մուստաֆաեւայից: Տիկինը ոստիկանությանը տեղեկացնում է, որ իր ամուսինը տուն չի վերադարձել, ավելին, պնդում է, որ անհետացել է: Լեյլա Մուստաֆաեւան Աֆղան Մուխտարլիի կինն է:

Նույն օրը Լեյլան կապվում է լրատվամիջոցների հետ, նրանց ներկայացնում իրենց պատմությունը, նշում, որ ամուսինն արդեն մեկ տարուց ավել է ապրում է Թբիլիսիում, քանի որ իր լրագրողական գործունեության պատճառով Ադրբեջանում խնդիրներ ուներ: Ապա լրագրողներին գտնում է Դաշգին Աղալարլին, որին Լեյլան արդեն հայտնած է լինում Աֆղանի անհետացման մասին լուրը, եւ պատմում, որ երբ իրենք Կոլտնտեսության հրապարակի սրճարանից քայլում էին դեպի կանգառ, իրենց մշտապես հետեւում էին ինչ-որ մարդիկ: Դաշգինը հստակ նշել է, որ նրանք վրացի չէին, ադրբեջաներեն էին խոսում, իսկ Աֆղանն էլ նրանց մի քանի անգամ նկարեց: Օգտվելով առիթից՝ Դաշգինը վրացի լրագրողներին նաեւ հայտնել է, որ իրենք՝ այսինքն Ադրբեջանից Վրաստան գնացած քաղհալածյալները, հենց Վրաստանում էլ խնդիրներ ունեն, քանի որ զգում են, որ իրենց միշտ հետեւում են. «Մեր հետեւից միշտ մի քանի մարդ է գալիս», նշել է Դաշգինն ու շեշտել, որ Վրաստանում վերջին ժամանակներս ակտիվացել է այնտեղ ապրող ադրբեջանցի լրագրողների եւ ակտիվիստների հետապնդումը:

⇨12

# Աշխարհն է փոխվում, Հայաստանից բացի

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

Վլադիմիր Ժիրինովսկին վերջերս մի առիթով հայտարարեց, որ պետության ղեկավարները խիստ հազվադեպ են կամովին հրաժարվում բարձրագույն պաշտոնից: Եթե նույնիսկ զգում են իրենց անկատարությունն ու ապաշնորհությունը կառավարման ղեկի մոտ: Ժիրիկը չէր հավակնում ինքնատիպության, քանզի միտքը հայտնի է ի սկզբանե: Սակայն կարելի էր խոսակցության ենթատեքստից ենթադրել, թե նա ում նկատի ուներ: Բանն այն է, որ Ռուսաստանի նորագույն պատմության մեջ նկատվեց նման բացառություն: Խոսքը վերաբերում է Բորիս Ելցինին:

Իրոք Ելցինն իր կառավարման վերջին փուլում կամովին՝ բոլորի համար միանգամայն անակնկալորեն ժամկետից շուտ հրաժարվեց գահից: Ընդ որում, խոստովանում էր, որ ինքը հոգնել է պաշտոնից, երկիրն էլ հոգնել է իրենից (իհարկե նա չէր կարող ասել, որ այդ ժողովուրդը ատելով-ատում է իրեն): Հրաժեշտի իր խոսքում նա նույնիսկ հրապարակավ ներողություն խնդրեց ռուսաստանցիներից: Նախագահի պաշտոնը հանձնելով Պուտինին՝ նա մեղքի անկեղծ գիտակցությամբ իր հետնորդին պատվիրեց «պահպանել Ռուսաստանը»:

Ելցինի այս քայլից ամենից շատ ապշել էին նրա «զինակից» պաշտոնյաները: Սակայն ներկայացնենք սոսկ ռուս քաղաքական մեկնաբաններից մեկի կարծիքը. «Ես այդպես էլ չհասկացա, թե ինչպես Ելցինը՝ այդ սարսափելի հրեշը, որը հանուն իր իշխանասիրության Ռուսաստանը վերածեց ավերակի, որն իշխանության համար պատրաստ էր սպանել ցանկացած մարդու, որը հանուն իշխանության գնդակոծեց խորհրդարանը, կամովին ժամկետից շուտ պաշտոնազրկեց ինքն իրեն»:

Ոչ մեկի կողմից ոչ մի հիշատակություն չկա, թե Ելցինը եղել է թմրամոլ կամ խաղամոլ, սակայն անթիվ-անհամար վկայություններ կան նրա խմիչքասիրության մասին: Ռուսաստանի կոմկուսի ղեկավար Գենադի Զյուգանովը, որը երկար տարիներ Ելցինի հետ ապրել է նույն շենքում, հավաստում է, որ նա եղել է «ամենախմողը» իր ճանաչած բարձրաստիճան չինովնիկների մեջ: Այս բացը եւս իսկայական բացասական հետեւանք է թողել նրա պետական գործունեության վրա:

Եկեք մի քանի շտրիխներով տանք այն ողբալի ժառանգության նկարագիրը, որը Ելցինը թողեց իր հետնորդին՝ Պուտինին: Առավել եւս, որ ամենայն հավանականությամբ որոշ բնութագրումներ «հոգեհարազատ» կլինեն հայաստանցիներին: Խորհրդային էկոնոմիկայից Ռուսաստանում գրեթե ոչինչ չէր մնացել, նոր ոչինչ չէր ստեղծվել: Վերակառուցման ու վերափոխումների պատճառած վնասը 14 անգամ գերազանցում էր Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ի կրած վնասը: Քաղաքական մեծ կշիռ ունեցող անսանձ օլիգարխների միջոցով երկիրը կառավարվում էր վաշինգտոնյան «մարզկոմի» կողմից, առանցքային նախարարները նշանակվում էին նրա հանձնարարականով: Ողջ կառավարչական ապարատը տնօրինում էին Ելցինի դրածոները, որոնց համար պետության շահերը վերջին տեղն էին գրավում: Խորհրդարանում՝ Պետդումայում պատգամավորների մեծ մասը կազմում էին քաղաքական ու տնտեսական կլանների կամակատարները, որոնք սոսկ կատարում էին իրենց պարագլուխների հրամանները, հաճախ ոչ քիչ փողերի դիմաց: Ուժային կառույցները քայքայված էին, նրանց վերնախավերը՝ այլասերված: Բանակն ու նավատորմը ջախջախված էին առանց պատերազմական գործողությունների: Պետանվտանգության կոմիտեն տրոհված էր մի քանի անգործունակ կառույցների, ներքին գործերի նախարարությունը կոռումպացված էր նախարարից մինչեւ շարքայինը եւ «համագործակցում էր» քրեական աշխարհի հետ: Խոր անկում էին ապրում առողջապահությունը, կրթությունը, գիտությունը: Բանդիտիզմը սահման չէր ճանաչում: Երկիրն իրապես կանգնած էր մասնատման ու վերջնական կործանման եզրին:

Եվ նույնիսկ այս պարագայում, Ժիրինովսկու ասած՝ Ելցինը կարող էր չհանձնել գահը կամ այն հանձնել իր նման կամ ավելի վատթար մեկի, թվում է անհավանական: Սակայն պարզվեց, որ, այնուամենայնիվ, այդ մարդը դեգրադացիայի չէր ենթարկվել այն աստիճան, որ չմտածեր երկրի ապագայի մասին, եւ այդ հողի վրա՝ ոչ իրեն, այլ Ռուսաստանին արժանի հետնորդի մասին: Հեռանկարի իմաստով նա չէր վստահում փորձառու վարչապետ Չերնոմիրդինին, փորձության ենթարկեց Պրիմակովին, Կիրիենկոյին, Ստեպաշինին, եւ նրանց մեջ չտեսավ իր ուզածին: Իր հուշերում Ելցինը գրում է, որ իր ենթակաների պարբերական զեկույցների մեջ իրեն ամենից շատ դուր են եկել անվտանգության դաշնային ծառայության ղեկավար Վլադիմիր Պուտինի հաշվետվությունները՝ ասպարեզի խնդիրների խոր իմացությամբ, մասշտաբայնությամբ, սթափ մոտեցումներով, բանականությամբ եւ այլն: Եվ ամենակարեւորը՝ ինքնավստահությամբ ու հավասարակշռվածությամբ: Հետախույզի կեցվածքով երբեք չի ընկրկել նույնիսկ շեֆի հատուկ «ստուգիչ ու սադրիչ» հարցերին պատասխանելիս: Ելցինի ուշադրությունն է գրավել նաեւ այն պարագան, որ Պուտինը ռացիոնալ է կառուցում իր հարաբերությունները չինովնիկների ու առհասարակ մարդկանց հետ: Այս անձի մեջ նա մեծ պոտենցիալ էր տեսնում:

Պուտինն իրոք արդարացրեց Ելցինի հույսերը: Նա դժվարին փորձությունների միջոցով իրապես կանգնեցրեց Ռուսաստանի քայքայման գործընթացը, վերականգնեց էկոնոմիկան, բանակը, գերտերության համբավը եւ գլխավորը՝ ի տարբերություն Ելցինի՝ շահեց իր քաղաքացիների հարգանքն ու նրանց մեջ վստահություն արթնացրեց երկրի ապագայի հանդեպ, ինչքան էլ որ ագրեսիվ դարձան Արեւմուտքի հակառուսական նկրտումները: Կես կատակ, իսկ գուցեեւ ավելի շատ լուրջ՝ Ռուսաստանում այն տեսակետն է հաստատվել, որ Ելցինի միակ ծառայությունը ռուսաց պետությանը այն է, որ նա լայն ասպարեզ հանեց Վլադիմիր Պուտինին:

Տպավորություն է ստեղծվում, որ նորօրյա Հայաստանն էլ է կանգնած «ելցինյան» դեգերումների առջեւ: Թեեւ հայոց լրատվամիջոցները մշուշապատ են ներկայացնում անգամ նոր մարդու՝ Կարեն Կարապետյանի ապագան: Ո՞վ Հայաստանը դուրս կքաշի ներկա աղետալի իրավիճակից: Ինչպես դա իր երկրում արեց Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինը:

Եվ վերջում ահա թե ինչի մասին: Հայաստանյան կերուխումասեր հեռուստաալիքներից որեւէ մեկը երբեւէ հրապարակե՞լ է լրջմիտ վերլուծական հաղորդաշար, հե՛նց հաղորդաշար՝ նվիրված երկիրը կործանող արտագաղթին, բացահայտելով դրա պատճառներն ու դրանց մեջ մեղավոր համակարգը:

Աշխարհն է փոխվում, Հայաստանից բացի:

# Անտեսանելի վտանգներ

⇨1

Ասենք միայն, որ այդ կատեգորիայի մարդիկ ժամանակին ահռելի կենսաթոշակի արտոնություն ստացան, որպեսզի ապահովեն մեր արդար, կաշառազերծ նախաքննության ու դատաքննության իրավունքը, բայց եւ ցկյանս ստանան միջին վիճակագրական քաղաքացուց տասն-տասնհինգ անգամ բազմապատիկ կենսաթոշակ:

Այս որոշումն ընդունելուց հետո անցել է բավական ժամանակ, ամեն մեկը, ով առնչվել է համակարգին, ու անգամ անձամբ չի առնչվել, հնարավորություն ունի գնահատելու՝ արդարացվա՞ծ էր արդյոք այդպիսի որոշումը, դույզն-ինչ պակասե՞ց կաշառքի դերը արտոնյալ այդ խավի աշխատանքային պրակտիկայում, թե ոչ: Վստահ եմ, որ պատասխանը «ոչ» է:

Հիմա, ճիշտ է, օրենքը նոր չենք ընդունում, այլ միայն երկարաձգում ենք, բայց առիթից մեզ զրկել ու չխոսել նրա ողջ անարդարության, ինչպես նաեւ Հայաստանի կենսաթոշակային քաղաքականության սնանկության մասին՝ չենք կարող:

Ես ընդամենն օրինակով ընդհանրացնեմ՝ ավելի վիզուալ լինելու համար:

Ես եւ վերջին պաշտոնով՝ Հայաստանի քննչական կոմիտեի նախագահ, շատ հարգարժան Աղվան Հովսեփյանը համալսարանում համարյա նույն տարիներին ենք սովորել: Իրավաբան դառնալով՝ նա բարձրացավ պաշտոնեական աստիճաններով՝ տարբեր պաշտոններում ներկայացնելով պետությունն ու նրա ճշմարտությունը, այդ պաշտոններից պետության փոփոխությունների համար աշխատելով: Ես լրագրող էի եւ աշխատել եմ ամենատարբեր պարբերականներում ու հեռուստատեսությունում՝ Աղվան Հովսեփյանի չափ ու միգուցե նրանից ավելի համոզված, որ իմ քննադատություններով, ձեռքս ցավի վրա դնելով նույնպես, իսկ միգուցե՝ շատ ավելի եմ նպաստում պետության կայացմանն ու երկիրը երկիր դարձնելուն: Բայց երբ թոշակի գնանք՝ Ա. Հովսեփյանը (տվյալ դեպքում ոչ թե նրա ու իմ անձերը նկատի ունեմ, այլ մեզ դիտարկում եմ որպես հավաքական կերպարներ)՝ ես պետք է ստանամ աղքատության խազին գտնվող կենսաթոշակ, Հովսեփյանը՝ համարյա ըստ պահանջի ապրելու: Չգիտեմ՝ ինչ այնպես չեմ արել իմ ոլորտում, որ արել է Աղվան Հովսեփյանն իր ոլորտում:

Եթե սա լիներ մի երկիր, որտեղ միջին ապրելակերպը տանելի է, ոչ մի խնդիր չէր լինի, սակայն մի երկրում, որտեղ ոչ ես, ոչ Աղվան Հովսեփյանը չենք կարողացել արդարացի, կաշառազերծ բարքեր ստեղծել, սա պարզապես անարդարության ցցուն օրինակ է: Այդ անարդարությունը հավասարապես վերաբերում է մեզ զուգահեռ նույն կրթությունը ստացած, հայրենիքին նվիրված աշխատելու զգացողությունը կրած մանկավարժներին, գիտնականներին, բոլոր այլ մասնագիտությունների մարդկանց:

Ընդհանրապես՝ իմաստն է անհասկանալի այն արտոնությունների, որոնք չեն գեներացրել շարժառիթը, հիմնավորումը: Կամ՝ միգուցե կապույտ արյուն ունեցողների խավին պետք էր արտոնություն տալ՝ տրվել է, ասենք, իմանանք:

Երբ ստեղծված լիներ կենսաթոշակային միջին տանելի մակարդակ՝ որոշ շերտերի, եթե պետությունը նրանց շատ էր ցանկանում խրախուսել, մի քանի տոկոս հավելյալ կենսաթոշակ թող վճարեր, որը նույնպես երաշխիք պետք է լիներ աշխատանքային կենսագրության առավել արդար սկզբունքների կիրառման համար: Թե չէ ի՞նչ է դուրս գալիս՝ մի մասը մարդիկ են, մի մասը՝ կիսաստվածներ:

Ընդհանրապես, եթե մեր կենսաթոշակային համակարգը արդար չդառնա՝ արտոնություններ ունեցողների մետազտասներից ազատվելով ու վճարմաան մինիմումը մի փոքր տանելի շեմի բերելով՝ շատ տարբեր ու անսպասելի սոցիալական փոխակերպումներով կարող է խճողել մեր կյանքը, անգամ՝ երկրի համար բազմաթիվ պոտենցիալ վտանգներ հրահրել, որոնցից մեկն էլ հենց այս օրերին զուգահեռ ուրվագծվեց:

Ռուսաստանի Պետդումայի ազգությունների կոմիտեն հավանություն է տվել այն օրինագծին, որով հեշտացվում է ՌԴ քաղաքացիություն ստանալու ընթացակարգը ռուսերեն խոսող այն մարդկանց համար, որոնք ծնվել են նախկին ԽՍՀՄ-ում: Երկու օրենքներում փոփոխություններ անելուց եւ այս օրինագծի ընդունումից հետո՝ այս կատեգորիայի մարդիկ այլեւս չեն հավաքի անհրաժեշտ զանազան փաստաթղթերը, որոնք ավելի վաղ դժվարացնում էին գործընթացը, անգամ հարկ չի լինելու սեփական երկրի քաղաքացիությունից հրաժարվելու փաստաթուղթ ներկայացնել: Այս մասին հայտնել է «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը: Ենթադրվում է, որ օրինագծի ընդունումից հետո այդ կատեգորիայի մարդիկ կարող են հեշտացված կարգով նաեւ կեցության իրավունք ստանալ Ռուսաստանում, բնականաբար՝ այս բոլորից հետո նաեւ օգտվել բոլոր այն իրավունքներից, որոնցից օգտվում են ՌԴ քաղաքացիները, այդ թվում՝ բարձր կենսաթոշակ ձեւակերպել, երաշխավորված բուժօգնություն ստանալ եւ այլն: Այսպիսի օրինագծի ստեղծման հանձնարարականը Ռուսաստանի նախագահ Վլադիմր Պուտինինն է: Օրինագիծը դեռ պետք է շրջի Դումայի հանձնաժողովներով, ապա լիագումար նիստի օրակարգ մտնի: Սակայն նկատի առնելով նախաձեռնողի անձը՝ առավել մեծ է նրա ընդունման հավանականությունը, համենայնդեպս՝ «Կոմսոմոլսկայա պրավդայի» կարծիքով:

Նկատեցի՞ք վտանգը: Դուք ձեզ համար նստած եք պետության հարմարավետ, երաշխավորված կենսաթոշակներով պաշտոններում, համարյա քնած եք ձեր ապագայի զգլխիչ թմրությունից, իսկ մեր բարեկամ գերտերությունը քնած չէ, նա մտածում է, թե ինչպես իր համակիրների ու տրոյական ձիերի կայուն շերտեր ստեղծի հետխորհրդային երկրներում, որտեղ աղքատ բնակչությունը, որ տասն հազար դրամով ընտրության է գնում, հարյուրհազար դրամանոց թոշակով մատի ուզած շարժումին համապատասխան կթռչի, ուզած ցանկությունը կյանքի կկոչի, ուզած հանրահավաքին շունչ ու արյուն կտա, ու ով գիտե, մի օր էլ...

Թե՞ կարծում եք մեր նման երկրում կառավարելի կլինի ունենալ կես միլիոն պոտենցիալ տրոյական ձիերով այն երերուն հողը, որը հղի է ամեն տեսակ սադրանքներով, երբ անհասկանալի կլինի, թե որտեղից է վտանգը՝ այդպիսի որոշումը կյանքի կոչող երկրի՝ Թուրքիայի հետ դաշնակցելու՞ց, Սիրիայի խնդիրներին մեզ խառնելու՞ց, Եվրոպայի հետ կապված մեր երկրի պլանները խառնելու՞ց, թե առհասարակ մյուս բազմաթիվ աշխարհաքաղաքական խնդիրների սրացումից: Անկախ ամեն կարգի դավադրական տեսություններից, ամեն երկրի պարագայում՝ սեփական շահը հետապնդելու պարզ, հոդաբաշխ քաղաքականության իրագործման ցանկությունն ուղղակի ի գործ դնելու բնական գործընթացով պայմանավորված:

Այս պարագայում ուղղակի կձեւափոխենք «Ով իր զինվորին չի կերակրում՝ պատրաստ պետք է լինի ուրիշի զինվորին կերակրել» ասույթն այսպես.«Ով իր թոշակառուին սոված է թողնում, մի օր կարող է տեսնել, որի իր քաղաքացիներն ամենեւին էլ իրենը չեն»:

Արթնացեք:

AZG NEW SHABAT.QXD 31/05/2017 21:45 Page 7



# Գանձագողերը ոչնչացնում են Հայաստանի մշակույթն ու պատմությունը

## *Պատմամշակութային հուշարձանները եւ անտիկ գտածոները կորստից փրկելու համար անհրաժեշտ է ազատականացնել պեղումների գործընթացը*

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանում համատարած բնույթ կրող գանձագողությանը նպաստում են մի շարք գործոններ՝ բնակչության սոցիալական վատթար պայմանները, հուշարձանների պահպանության համակարգի անկատարությունը եւ, հատկապես, իրավապահ մարմինների անգործությունը: Այս իրավիճակում չափազանց դժվար է Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառված պատմության եւ մշակույթի ավելի քան 25 000 անշարժ հուշարձանների անխաթարությունը պահպանելը:

«Հայաստանում ակնկալել օրինապահ գործունեություն նրանցից, ովքեր պարտավոր են իրենց գործունեությունն իրականացնել՝ լուրջ չէ: Մշակույթի նախարարությունը ոչ միայն չի իրականացնում իր պարտավորությունները, այլեւ շատ վատ վերաբերմունք ունի նրանց հանդեպ, ովքեր ցույց են տալիս, որ հուշարձանները քանդված, ավերված են: Նրանց ամբողջ քաղաքականությունը մտահոգ մարդկանց հետեւելն է եւ ոչինչ ավելին»,- ասում է ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր **Համլետ Պետրոսյանը**:

Հնագետները եւ մշակութաբաններն այս ոլորտում համակարգային փոփոխությունները պարտադիր են համարում: Նրանց կարծիքով՝ ժամանակն է մտածել, թե Հայաստանում ինչպես օրինականացնել ամբողջ գործընթացը:

Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն **Պավել Ավետիսյանը** կարծում է, որ հուշարձանի անխաթարությունը պահպանելու պատասխանատվությունը պետք է տեղափոխել տեղական ինքնակառավարման մարմիններ: «Հուշարձանը բնակիչները կպահպանեն, երբ դրանք այդ գյուղերի սոցիալական ծրագրի մաս կդառնան»,- ասում է տնօրենը:

«Մենք պետք է հասնենք նրան, որ ժողովուրդն ինքը գիտակցի, որ պատմական արժեքները վնասել պետք չէ, սա իրենց հարստությունն է: Մենք ունենք 25 000 գրանցված պատմամշակութային ժառանգության հուշարձաններ: Դա ֆանտաստիկ թիվ է, եւ հսկիչները, որոնք մեքենա չունեն անգամ, չեն կարողանա վերահսկել»,- ասում է ճարտարապետ **Ստեփան Նալբանդյանը**:

Հանրապետության տարածքում ՀՀ կառավարության կողմից հաստատված պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում հաշվառված է ավելի քան 25 000 հուշարձան՝ խմբավորված շուրջ 7304 պահպանական միավորներում: Հուշարձաններն ըստ իրենց բնույթի դասակարգված են՝ հնագիտական, պատմական, մոնումենտալ արվեստի, քաղաքաշինական ու ճարտարապետական:

Պահպանական միավորներից 1809-ը հնագույն, հին եւ միջնադարյան բնակատեղիներ, ամրոցներ ու ամրապաշտպանական կառույցներ են,

2339-ը՝ վանական համալիրներ, եկեղեցիներ եւ մատուռներ:

Կան հարյուրավոր դամբարանադաշտեր, պատմական գերեզմանոցներ, տարաբնույթ աշխարհիկ կառույցներ, մեմորիալ եւ մոնումենտալ արվեստի նմուշներ:

Իսկ ներկայումս, ինչպես հնագետներն են վկայում, որ գյուղ մտնում ես, ասում են՝ ավերել են հուշարձանը: Գտածոները վաճառելու համար, հաճախ, տանում են նաեւ Հնագիտության ինստիտուտ: Որպես կանոն, չեն հայտնում, թե որտեղից են ձեռք բերել, բայց իրերի տեսակից ու տեսքից դատելով հնագետները կարողանում են բնութագրել այն: Գանձագողությունը կանխել չի հաջողվում եւ մնում է միայն ուղղորդել, որ տանեն թանգարան: Սակայն նրանք հրաժարվում են՝ ասելով, որ իրենց ուզած գումարը չեն տալիս:

Հայաստանի երկու ամենամեծ՝ Պատմության թանգարանին եւ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանին ուղղված գրությամբ ցանկանում էինք պարզել, թե ֆիզիկական անձանցից որքան եւ ինչ արտեֆակտներ են ձեռք բերել:



Պատմության թանգարանից տեղեկացնում են, որ 2015-16թթ. ֆիզիկական անձանցից ձեռք է բերվել 60 արտակարգ հնագիտական առարկաներ՝ Ք.ա. 9-6 դարերի բրոնզե արձանիկներ, փորագրազարդ գոտի եւ դաշույն, դրամագիտական առարկաներ՝ 10-11 դարերի բյուզանդական դրամներ եւ 8-րդ դարի մոնղոլական դրամ՝ հայատառ գրությամբ, ազգագրական առարկաներ՝ 9-րդ դարի, պատմական Հայաստանի տարբեր տարածաշրջաններից եւ գաղթավայրերից գորգեր, արծաթյա գոտիներ, ասեղնագործության նմուշներ, տարազներ եւ կիրառական արվեստի նմուշներ:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն **Գագիկ Գյուրջյանը** հայտնում է, որ ֆիզիկական անձից 2016 թ.-ին 10 հնագիտական առարկա են գնել, 2017 թ.-ին՝ 4-ը: Ընդհանուր 14 հնագիտական առարկաները մ.թ.ա 10-8-րդ դարի կերամիկական եւ բրոնզե իրեր են:

Ներկայացվածից հետեւությունն այն է, որ մասնավոր անձանց ձեռքում շրջանառվող հնագիտական առարկաների չնչին մասն է թանգարաններում հայտնվում, բացի այդ, ավելի վաղ շրջանի, ասենք՝ մ.թ.ա.3-1 դարերի արժեքավոր իրերը թանգարան չեն տարվում: Թանգարանների աշխատակիցների համար գաղտնիք չէ նաեւ այն, թե հնագիտական առարկաները որտեղից եւ ինչ ճանապարհով են հայտնվել վաճառողների ձեռքում, «պեղողներին» նրանք էլ են ճանաչում: Պարզապես, երբ թանգարանը որոշակի գումարի դիմաց գնում է նրանցից՝ դա համարվում է օրինական, իսկ երբ նույն անձինք վաճառում են դրսում՝ համարվում է անօրինական:

Բեմադրող-ռեժիսոր, նկարիչ **Սուքիաս Թորոսյանի** կարծիքով՝ մարդկանց ձեռնտու չէ քրեական ոլորտում հայտնվելը, բայց քանի որ պետությունը դրանք չի գնում, իսկ Հայաստանում արկածախնդրությունը մեծ է եւ միանգամից ուզում են հարստանալ՝ արժեքավոր իրերը հայտնվում են դրսում:

«Պետությունը չի կարողանում գնել, գոնե աճուրդում կդնի եւ կարող է հետեւել, թե ուր է գնում այն: Չափագրվի, գրանցվի, հաստատվի, իսկ հիմա մեր ունեցածը ցանկացած երկիր կարող են տանել եւ ասել, որ իրենցն է: Ասածս նա չէ, որ բոլորը հավաքեն Հայաստանում, բայց պետք է հետեւողական լինել հայկական մշակույթը ճիշտ ներկայացնելու հարցում: Ճիշտն աճուրդն է, որով գյուղացուց կվերցնես նրա հայտնաբերածը եւ կանձնագրավորես»,- ասում է պրն Թորոսյանը:

Պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը շեշտում է, որ կարգավորված չէ նաեւ այն հարցը, թե ինչու կազմակերպությունը չի կարող հնագիտական թանգարան ունենալ, ինչու անհատները չեն կարող հնագիտական նյութը վաճառել, ինչո՞ւ հնագետներն իրավունք չունեն պեղած տարածքների իրերը պահել իրենց հավաքածուում:

«Հնագետը 1000 կտոր խեցի է գտնում, որից մեկն է թանգարանային արժեք, իսկ 999-ը պետք է նորից մի հորի մեջ լցնի՝ թաղի: Բազմաթիվ վեճեր են եղել, երբ փորձել են Տիգրանակերտի պեղումների իրերը վաճառել: Ասում են, թե ինչ կա դրա մեջ, եթե հարյուրավոր խեցու բեկորներից զբոսաշրջիկներին վաճառենք եւ հարցեր հոգանք: Կարո՞ղ է վաճառել եւ ինչ պայմանով, այս հարցը հստակ կարգավորված չէ, պետք է հստակեցվի եւ վերահսկողության մեխանիզմ սահմանվի»,- ասաց պրն Պետրոսյանը:

Հնագետը ներկայացնում է Մեծ Բրիտանիայի, Իսրայելի փորձը, որտեղ մասնավոր անձանց թույլատրված է հնագիտական իրեր ձեռք բերելը, եթե նրանք պահպանում են այդ իրերի պահպանման, հանրահռչակման եւ այլ պայմաններ: Նրա ասելով, եթե այդ հարցը մեր երկրում կարգավորված լիներ, մարդիկ կարող էին լիցենզիա ունեցող հնագետին պեղում պատվիրել, սեփական թանգարանն ունենալ, այդ իրերը մեկ ուրիշ թանգարանի վաճառելու իրավունք կունենային:

«Այսինքն, միայն թանգարանը չէ, որ կարող է իրեր ձեռք բերել եւ ցուցադրել, դա կարող են անել տարբեր կազմակերպություններ, տարբեր անհատներ: Արդյունքում՝ ամբողջ մշակութային ժառանգությունը գտնվում է որոշակի



հսկողության տակ»,- հայտնեց պրն Պետրոսյանը:

Մեծ Բրիտանիայի օրինակը ուսումնասիրել է նաեւ Սուքիաս Թորոսյանը: «Անգլիացու սեփական հողատարածքում, եթե ինչ-որ բան են գտել, այդ հողը 10-ն անգամ թանկանում է, բայց միեւնույն ժամանակ կողքի տունը, որն ավելի բարեկարգ վիճակում է, կարող են գնել նրա համար եւ դա վերցնել նրանից»,- նշում է պրն Թորոսյանը:

Ներկայացնում է նաեւ Բուլղարիայի օրինակը, որտեղ, նրա ասելով, շատ են հնություններ գտնում, բայց եթե դա շուկա տանեն՝ էժան են վաճառելու: Պետությունն ավելին է տալիս, որպեսզի դրանք երկրում պահպանի, հետո երբ մտնում է ազգային ֆոնդ, գնահատում են՝ արժեքը բարձրանում է: Բուլղարիայում մեզնից 300 անգամ ավելի շատ ոսկի ունեն ցուցադրված: Դրա նկատմամբ նրանց վերաբերմունքն այլ է, օրենքը շահագրգռում է, որ հանձնեն: Իսկ մեզ մոտ միշտ կրիմինալի հոտ է գալիս, շատ ժամանակ, երբ կավե ամաններ են տեսնում՝ ջարդում են, որ շառից հեռու մնան»:

Հայաստանի օրենսդրությունը նույնպես փոխհատուցում նախատեսում է այն դեպքերում, երբ հայտնաբերողը «պատմության եւ մշակույթի հուշարձաններ պարունակող գանձը հանձնում է պետության սեփականությանը»:

***ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 186 հոդված.***

*Պատմության եւ մշակույթի հուշարձաններ պարունակող գանձը հանձնվում է պետության սեփականությանը: Ընդ որում, հողամասի կամ այլ գույքի սեփականատերը, որտեղ թաքցված է եղել գանձը, եւ գանձը հայտնաբերող անձն իրավունք ունեն միասին վարձատրություն ստանալ գանձի արժեքի 50 %-ի չափով: Այդ անձանց միջեւ վարձատրությունը բաշխվում է հավասար բաժիններով, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:*

Սակայն ոլորտի մասնագետները չեն հիշում մի դեպք, երբ որեւէ մեկին փոխհատուցած լինեն հանձնված գտածոյի դիմաց: Մամուլում մեր պրպտումները մի դեպքի մասին են միայն հիշեցնում՝ 2011 թ.-ին Լեռնային Ղարաբաղի Սոնասար գյուղում գտնվել են հելլենիստական շրջանի գանձեր (մ.թ.ա. 4-րդ դար): Ասվում է, որ Սոնասար գյուղի բնակիչ **Անդրանիկ Կյուրեղյանը**, անասուններին արոտավայրում արածացնելով, պատահաբար յուրահատուկ առարկաներ է գտել՝ հելլենիստական շրջանի ոսկե, արծաթե եւ բրոնզե իրեր: Թագուհու դամբարանից հանել են թանկարժեք իրեր՝ մոտ 700 գրամ արծաթե, 4-5 կգ բրոնզե, ինչպես նաեւ ոսկե զարդեր: Նրա գտած գանձը նախնական գնահատվել է 8 մլն դրամ, սակայն Անդրանիկը հրաժարվել է Պատմության թանգարանի առաջարկած 4 մլնից՝ այն բավարար չհամարելով:

Հնագետները նույն դեպքը հիշատակելով այն որակում են գանձագողություն եւ ասում են, որ գանձերը հանելիս վնասել էին թագուհու թագը եւ ապարանջանը:

Սյունիքի մարզի Եղվարդ գյուղի տարածքում հայտնաբերված, բռնագրավված եւ մշակույթի նախարարությանը հանձնված 265 կտոր իրերի դիմաց **Սեւակ Սաֆարյանը** փոխհատուցում է պահանջում: Նրա նկատմամբ հարուցված քրեական գործը կարճվել էր հանցակազմի բացակայության պատճառով: Սեւակից առգրավված իրերը ներկայումս գտնվում են «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ում: Մշակույթի նախարարի տեղակալ **Արեւ Սամուելյանը** մեզ հայտնեց, որ այստեղ նախնական, վերականգնման աշխատանքներ կատարելուց եւ թանգարանային տեսքի բերվելուց հետո դրանք կցուցադրվեն Պատմության թանգարանում:

Ա. Սամուելյանը հնագիտական իրերը հայտնաբերած Սեւակ Սաֆարյանից պահանջել է գրավոր հրաժարվել փոխհատուցման պահանջ ներկայացնելուց՝ սպառնալով վերաբացել քրեական գործը: Սեւակը չի հրաժարվում եւ շարունակում է բողոքներ ներկայացնել պետական բոլոր կառույցներին: Ա. Սամուելյանը 20.04.2017 թ-ին նրան է ուղարկել գլխավոր դատախազությանը հասցեագրված բողոքի օրինակը: «Ի պատասխան Ձեր ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացրած եւ ՀՀ մշակույթի նախարարություն վերահասցեագրված 2017 թ. փետրվարի 21-ի դիմումի հայտնում ենք, որ մշակույթի նախարարությունը դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ վերացնելու ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության քրեական գործը կարճելու մասին որոշումը եւ քրեական գործ հարուցելու համար»:

⇨8

ՆԱԻՐ ՅԱՆ

# Արարատ-Ուրարտու թագավորության պատմությունը` ֆիլմի տեսքով

Հայոց ուրարտական պետությունը մշտական ուսումնասիրության ու բացահայտումների աղբյուր է: Եթե հաշվի առնենք, թե ինչ հսկայական տարածքի եւ ինչ հզոր քաղաքակրթության մասին է խոսքը, ապա հասկանալի է դառնում հայ եւ օտարազգի գիտնականների հետաքրքրության պատճառը: Ուրարտուն եղել է հզոր գերտերություն, որի սահմանները ձգվում են այսօրվա Հայաստանի, Վրաստանի, Իրանի, Թուրքիայի տարածքում: Ուրարտուի մասին գիտական ուսումնասիրություններ շատ կան, բայց առաջին անգամ մեծածավալ, գիտահանրամատչելի վավերագրական ֆիլմ է պատրաստվել, որը համապարակ տեղեկություններ է հաղորդում այդ պետության մասին` հիմնադրումից մինչեւ անկում: Ուրարտուի թագավորության մասին հսկայածավալ նյութն ու ուսումնասիրությունները առիթ են դարձել, որպեսզի հղանա դրանք ֆիլմի վերածելու գաղափարը, որի հեղինակը պատմաբան **Արտակ Մովսիսյանն** է: Նրա սցենարի հիման վրա էլ ռեժիսոր **Արտակ Ավդալյանը** նկարահանել է «Արարատ-Ուրարտու թագավորություն» փաստագրական ֆիլմը:

Ֆիլմի աշխատանքները սկսվել են 2008 թվականից: Կադրեր կան, որոնք արվել են 2009-ին Էրեբունի թանգարանում Ուրարտուին նվիրված գիտաժողովից: 9 տարի հետո «Արարատ-Ուրարտու թագավորություն» ֆիլմը պատրաստ է: Պրեմիերան տեղի ունեցավ «Մոսկվա» կինոթատրոնում: Արտակ Մովսիսյանը ներկայացրեց ֆիլմի պատրաստման ընթացքն ու նպատակները. «9 տարվա ընթացքում ժամանակ առ ժամանակ գումար էինք հայթայթում, ուղեւորությունները նկարահանում, աշխատանքը շարունակում. գումարը վերջանում էր, սպասում էինք մեկ այլ ֆինանսական աղբյուրի ու այսպես շարունակ: Հովանավորները հիմնականում Սփյուռքից են: Մեզ հաջողվեց վերջին փուլն էլ ավարտել, հատկապես ֆիլմի թարգմանությունը նախաձեռնել` ռուսերեն, անգլերեն, պարսկերեն եւ թուրքերեն: 120 րոպե տեւողությամբ այս ֆիլմը վավերագրական գիտահանրամատչելի ժանրի է:

Ցուցադրման պայմանավորվածություն ենք ձեռք բերել տեղական հեռուստաընկերությունների հետ: «Արարատ-Ուրարտու թագավորություն» ֆիլմը կտեղադրվի համացանցում. մտադիր ենք նաեւ որպես ուսումնական ձեռնարկ` այն տրամադրել մեր կրթօջախներին, բանակին:

Ֆիլմն առաջին համահայկական թագավորության մասին է, որն ապրել է 300 տարի (Ք. ա. 9-7-րդ դարեր) եւ միավորել ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Արարատ-Ուրարտու պետությունը եղել է գերտերություն եւ իշխել հարեւան երկրների վրա, նաեւ նվաճել դրանք: Այդ պետության սահմաններում է հենց գծագրվել ամբողջ հայոց պատմությունը: Այդ սահմաններն են 19-րդ դարի աշխարհագրագետները կոչել Հայկական լեռնաշխարհ: Ցավոք մեր ժողովրդին Ուրարտուից հայտնի է միայն Արգիշտիի անունը: Այս ֆիլմը հանրությանը ծանոթացնում է հայոց հզոր թագավորության գործունեությանը, պատմությանը, նրա ստեղծած քաղաքակրթությանն ու մշակույթին»:




Ֆիլմում ընդգրկված են տարբեր թանգարաններ, նկարահանվել են Կարմիր բլուրի, Արեւմտյան Հայաստանում թուրքական արշավախմբի պեղումները Երզնկայի մոտ: Արշավախմբի ղեկավար **Կարաօսմանօղլուն** հատուկ այս ֆիլմի համար հարցազրույց է տվել` նշելով Ուրարտու անվանումը, հնագիտական նշանակությունը, բայց չանելով էթնիկական որեւէ շեշտադրում: Նկարահանումներ են արվել Հայաստանի Հանրապետության, Արեւմտյան Հայաստանի, Իրանի 30 հնավայրերում, այդ թվում` Բեհիստունում, ուր գտնվում է հայտնի եռալեզու արձանագրությունը. այնտեղ Հայաստանը պարսկերեն հիշատակվում է Արմինա, էլամերենում` Հարմինուա եւ ասուրաբաբելերենում` Ուրարտու:




Եւս մի փաստ, որ երեք հիշատակումներն էլ նույն Հայաստանն են` տարբեր լեզուներով եւ որ երեքն էլ հայերի պատմական հայրենիքն են: Ու չկա մի գիտնական, որ կասկածի տակ առնի այն փաստը, որ հայերն այդտեղ տեղաբնակներ ու գերիշխող էթնոս են եղել: Բացի վերոնշյալ անուններից, հայերի հայրենիքն ունեցել է այլ անվանումներ եւս` Բիայնա, Արմանի, Նաիրի, Հայասա, Արմինա: Ընդունված է ասել, որ Հայկական լեռնաշխարհը 300.000 քկմ է, բայց հարակից շրջաններում, Ատրպատականի տարածքում էլ հայերը բավականին նվաճումներ են արել` Ուրմիո լճից հարավ: Ընդհանուր առմամբ Ուրարտու պետության տարածքը կազմել է 300-400.000 քկմ: Արգիշտին եւ Սարդուրին երկու անգամ Բաբելոնն են գրավել: Եթե հաշվի առնենք, որ հայոց արքաները նվաճել են նաեւ այլ երկրներ, ապա Հայաստանի տարածքը կազմել է մեկ միլիոն քկմ:

Ֆիլմում ներառված են ութ հայ եւ ութ օտարազգի գիտնականների հարցազրույցներ: Լոնդոնի թանգարանի սեպագրության բաժնի ղեկավար **Իրվինգ Ֆինքելը**, Իտալիայից` **Միրյո Սալվինին**, Գերմանիայից` **Գերնոթ Վիլհելմը**, ԱՄՆ-ի Բերկլիի համալսարանից` **Դեվիդ Ստրոնախը**, որը երկար տարիներ պեղել է Էրեբունին, ներկայացնում են Արարատ-Ուրարտու թագավորության ժամանակաշրջանին ու պատմամշակութային ժառանգությանը բնորոշ մանրամասներ: Ֆիլմում Ստրոնախը հենց Էրեբունի արգելոցում էլ ներկայացնում է Ուրարտուի ճարտարապետությունը: Իսկ ֆրանսիացի գիտնական **Ֆրանսուա Ֆիշեն**, որ նույնպես մասնակցել է Էրեբունու պեղումներին, խեցեղեն գտածոներն է ներկայացնում ու հետաքրքրական մեկնաբանություններ անում Վանի թագավորության մշակույթի եւ քաղաքակրթական ձեռքբերումների մասին: Ֆիլմը ներկայացնում է, թե ինչ նշանակություն ունի Ուրարտուն մեր պատմության մեջ, ինչ քաղաքակրթություն ու արժեք է ունեցել հին աշխարհում:



Հետադարձ հայացքով գնահատելով մեր պատմական անցյալը` ֆիլմը տեսաշարով ցուցադրում է այն, ինչը պատմողական տեքստով է ներկայացվում: Իսկ դա, իհարկե, հեշտ չի ստացվել: Մենք գործ ունենք մի աշխարհի հետ, որի հետքերն են միայն պահպանվել, որը հողի տակ է եւ ընդգրկում է հսկայական տարածք: Այս ամենը վիզուալ առումով տեղ հասցնելը բարդ աշխատանք է: Ռեժիսորական մոտեցումը ներկայացնում է Արտակ Ավդալյանը. «Պատմողական վավերագրական ֆիլմում, երբ խաղարկային հատվածներ չկան, ռեժիսորական լուծումները հեշտ չեն, բայց պատմագիտական հարուստ նյութը, զուգակցված տեսաշարին ու երաժշտությանը, ստեղծում է մի ամբողջականություն, որը փորձում է առավելագույն տեղեկություն հաղորդել մարդկանց, նրանց տանել դեպի պատմության խորքերն ու Ուրարտու պետության ժամանակները: Որպես հայ` ես ինձ շատ հպարտ եմ զգում, որ ունեցել եմ այսպիսի նախնիներ, այսպիսի հզոր պետություն: Ֆիլմի նկարահանումների ժամանակ բազմաթիվ բացահայտումներ են եղել, որոնք ապշեցրել են ինձ. ամենից շատ զարմացրել ու հիացրել են Ուրարտուի արքաները: Երեք կարեւորագույն առաքելություն անբեկանելի է եղել նրանց համար` այգի տնկել, պաշտպանել պետության սահմանները, ապահովել անվտանգությունը եւ տաճար կառուցել»:

Ինչ ճանապարհ կանցնի «Արարատ-Ուրարտու թագավորություն» վավերագրական ֆիլմը եւ ինչ հնչեղություն կստանա` կախված է մեր արժեքների նկատմամբ մեր տրամադրվածությունից ու սիրո չափից: Փաստարկված, հիմնավորված, հազար ու մի աղբյուրներով ճշտված տեղեկությունները ֆիլմի տեսքով մատուցված են, մնում է, որ յուրաքանչյուր հայ ազգային արժանապատվության ձգտումով մասնակցի ֆիլմի հանրահռչակմանն ու տարածմանը:

# Գանձագողերը ոչնչացնում են Հայաստանի մշակույթն ու պատմությունը

⇨7

ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ Համլետ Պետրոսյանը թվարկում է մի շարք հարցեր, որոնք օրենքում լիարժեք կարգավորված չեն: Նա սկզբունքային է համարում այն հարցի հստակեցումը, թե ով իրավունք ունի հողը քանդելու եւ այնտեղից ինչ-որ բան գտնելու, ինչպես կարող է այն տնօրինել: Աշխատանքի ընթացքում տեխնիկայի կարիք շատ են ունենում, սակայն մինչեւ հիմա նույնիսկ տեխնիկայի օգտագործումը պեղումներում հստակորեն սահմանված չէ եւ ինքը, որպես հնագետ, չգիտի, կարո՞ղ է տեխնիկա կիրառել պեղումներ կատարելիս:

Պրոֆեսորը նշում է, որ օրենքում վերջնականապես հստակեցված չէ պետականից բացի հնագիտական գտածոների պահպանման որեւէ կարգ: Արշավախմբերը, որոնք աշխատում են պետության ֆինանսավորումով, պարտավոր են իրենց նյութերը հանձնել այս կամ այն թանգարանին: «Այնպես չէ, որ ինչքան մենք գտնենք, այնքան թանգարանը պատրաստ է ընդունել, եւ տասնյակ տարիներ այդ նյութերը տարբեր սենյակներում պահվում են ոչ օրինական ճանապարհով, ոչ օրինական կարգով»,- հայտնեց պրն Պետրոսյանը:

Սահմանված կարգի համաձայն` տարածաշրջանից հայտնաբերված գտածոները պետք է հանգրվանեն տեղի երկրագիտական թանգարաններում կամ եթե չկա` այդ տարածաշրջանում գտնվող թանգարանում: Մարզերի երկրագիտական թանգարաններում հազվադեպ են համալրումներ լինում եւ դա լինում է այն ժամանակ, երբ տվյալ տարածքում պեղումներ են կատարվում: Եթե շատ հազվագյուտ նմուշ է` հանձնվում է Պատմության թանգարան: Այդ է պատճառը, որ հնաոճ եւ հետաքրքրությունը կորցրած մարզային թանգարաններն ընդգրկված չեն տուրիստական երթուղիներում:

Սակայն մարզային թանգարանները դրանք պահեստավորելու, վերականգնելու եւ ցուցադրելու համար համապատասխան տարածքներ եւ միջոցներ չունեն: Մեծ դժվարությամբ փորձում են պահպանել ունեցած նյութերը, իսկ նոր, այն էլ մեծաքանակ գտածոների համար համապատասխան պահոցներ են անհրաժեշտ: Հնագիտության ինստիտուտը կարեւորում է մեծ պահեստադարան ունենալու հարցը:

*(Շար. 3 եւ վերջ)*

# Նավթի գների տատանումը եւ ԱՄՆ-ի դերակատարումը այդ հարցում

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

տ.գ.թ., միջազգային անվտանգության եւ էներգետիկ աշխարհաքաղաքականության մասնագետ

Նավթի համաշխարհային շուկան վերջին օրերի ընթացքում աչքի է ընկնում իր անկայունությամբ, պատճառը նավթի գների տատանումներն են, որոնք վերջին 1-2 շաբաթների ընթացքում տատանվել են 45-ից 55 դոլար մեկ բարելի դիմաց եւ, ապա, հակառակ ուղղությամբ: Նավթի գների նման տատանումները ազդում են այդ էներգակիրները արտահանող պետությունների վրա, փոփոխելով վերջիններիս ապրանքաշրջանառության հաշվեկշիռը, նվազեցնելով նրանց եկամուտները, նաեւ մեծացնելով անվստահությունն այդ երկրների նկատմամբ: Նման տատանումները այդ էներգակրի եկամուտներից խորքային կախվածություն ունեցող պետությունների մոտ առաջ են բերում տնտեսական, նաեւ քաղաքական անկայունություն եւ նույնիսկ կարող են ներքին ճգնաժամի պատճառ հանդիսանալ: Նշենք, որ այս գործընթացն առաջին անգամը չէ, որ տեղի է ունենում, եւ ամեն անգամ այդ տատանումները լինում են հիմնականում նավթի շուկայում պահանջարկի ու առաջարկի հարաբերակցության խախտումից, որի պատճառները բազմազան են եղել տարբեր ժամանակաշրջաններում, սակայն ներկայումս նման պատճառներից մեկը ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդումն է նավթի համաշխարհային շուկայում:

ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդման ֆենոմենը նկարագրելուց առաջ նշենք, որ նավթ արդյունահանող պետությունների համար ռազմավարական նշանակություն ունի նավթի գնի կանխատեսելիությունը, քանի որ այն հնարավորություն է տալիս կազմակերպել ու պլանավորել պետության զարգացման թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական գործընթացը: Հակառակ դեպքում, այդ պետությունները բախվում են սեփական ֆինանսական եկամուտների ու ծախսերի հաշվարկման, պետական բյուջեի նախատեսման խնդիրների առաջ: Այսինքն, նավթի գների անկանխատեսելիությունը այդ հումքը արտահանող պետությունների համար լրջագույն խնդիր է, հետեւաբար գների կայունացումը, երկարատեւ ժամանակաշրջանի կտրվածքով, ռազմավարական նշանակություն ունի նրանց համար:

Նավթ արտահանող պետությունների շահերը ներկայացնող միջազգային ամենախոշոր կազմակերպությունը` OPEC-ը, ի սկզբանե ստեղծված էր հենց նավթի գների ձեւավորման գործընթացը իր վերահսկողության տակ վերցնելու նպատակով: Սակայն, եթե անցած դարի 70-ականներին դա նրանց մասամբ հաջողվում էր, ապա ժամանակի ընթացքում նրանք կորցրեցին այդ վերահսկողությունը: Նման կորստի պատճառը OPEC-ի (Organization of the Petroleum Exporting Countries) դիրքերի թուլացումն էր նավթի համաշխարհային շուկայում: Այսպես, եթե 70-80-ականներին նրանք վերահսկում էին այդ շուկայի 60-70%-ը, ապա հետագայում այդ գերիշխանությունը սկսեցին կորցնել, քանի որ ի հայտ եկան նավթ արտահանող նոր պետություններ, որոնք OPEC անդամ չէին եւ չէին վերահսկվում նրանց կողմից ու չէին գործում ըստ այդ կազմակերպության ներքին կանոնադրության ու որոշումների:

Այսպիսով, նավթի շուկայի փոփոխությունը հանգեցրեց նավթի գների վերահսկողության մեխանիզմների փոփոխությանը: Այսօր OPEC անդամ պետությունները ապահովում են նավթի պահանջարկի միայն 40%, այն դեպքում, երբ տիրապետում են նավթի համաշխարհային պաշարների մոտ 77%, իսկ ոչ OPEC պետությունները վերահսկելով նավթի պաշարների ընդամենը 23%, կարողանում են բավարարել նավթի շուկայի պահանջարկի մոտ 60%: Այսինքն, ժամանակի ընթացքում նավթի շուկայում սկսեցին դոմինանտ դիրք զբաղեցնել այն պետությունները, որոնք, չունենալով նավթի մեծ պաշարներ, այնուամենայնիվ, արդյունավետ կառավարման եւ ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ կարողանում են առավելություն ստանալ այդ շուկայում: Նմանատիպ պետության լավագույն օրինակն է ԱՄՆ-ը, որն իր փորձով ապացուցեց, որ կարող է առավելություն ստանալ նույնիսկ այնտեղ, որտեղ թվում էր, թե շանս չունի:

Իրավիճակը հասկանալու համար ներկայացնենք, որ, օրինակ, Սաուդյան Արաբիան եւ ԱՄՆ-ը արդյունահանում են մոտավորապես նույն քանակի նավթ` օրական 10 մլն բարել, սակայն այս պետությունները տիրապետում են տարբեր պաշարների: Այսպես. Սաուդյան Արաբիան վերահսկում է ապացուցված նավթի պաշարների մոտ 16%, այն դեպքում, երբ ԱՄՆ-ը` միայն 3.2%: Այսինքն, սա մեկ անգամ եւս ապացուցում է, որ գրագետ կառավարումը եւ ժամանակակից տեխնոլոգիաները կարող են հրաշքներ գործել եւ փոքր ռեսուրսներ ունեցող պետությանը առաջատար սարքել մի բնագավառում, ինչը թվում էր անհնար:

ԱՄՆ-ի առավելությունը այս շուկայում պայմանավորված է նաեւ, այսպես կոչված, թերթաքարային նավթի առկայությամբ, որը վերջին տասը տարիների ընթացքում ահռելի տեմպերով զարգանում է այդ պետությունում, այն դարձնելով առաջատարը էներգակիրների արդյունահանման շուկայում: Թերթաքարային նավթի արդյունահանման խնդիրները կապված էին այդ տեխնոլոգիաների թանկության հետ, սակայն ամերիկյան ընկերությունները կարողացան դրանց կատարելագործմամբ այդ խոչընդոտը հաղթահարել, որին նպաստեց նաեւ մինչեւ 2014թ. նավթի գների աննախադեպ թանկացումը:

Հիշեցնենք, որ 2010-14թթ նավթի գները 110-120 դոլարի սահմաններում էին, ինչը խրախուսում էր թերթաքարային նավթի արդյունահանմանը: Այս տեխնոլոգիաների ու թերթաքարային նավթի շնորհիվ ԱՄՆ-ը նվազեցրեց իր կախումը նավթի ներմուծումից, իսկ 2015թ. սկսեց ամբողջովին ապահովել սեփական պահանջարկը: Այսպես, եթե դեռ 2010թ. ԱՄՆ-ը ապահովում էր իր պահանջարկի միայն 63%-ը, ապա 4 տարի անց` 2014թ.ին` արդեն 94%-ը:

ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդումը նավթի իր ներքին շուկայում հանգեցրեց նրան, որ համաշխարհային շուկայում առաջացավ նավթի ավելցուկ: Այսինքն, 2000թ.-ից սկսած առաջին անգամ առաջարկը գերազանցեց պահանջարկը, ինչը հանգեցրեց նավթի գների անկմանը եւ 2016թ. այն կազմեց միջինը 35 դոլար: Հետագայում այդ գները որոշ չափով կայունացան` հասնելով 50-55 դոլարի` մեկ բարելի դիմաց, սակայն OPEC-ի եւ նրա հետ համագործակցող նավթ արդյունահանող մյուս պետությունների փորձերը` նվազեցնել կամ գոնե սառեցնել այդ հումքի արդյունահանումը, դեռեւս արդյունք չի տալիս: Նման իրավիճակի պատճառը հենց ամերիկյան թերթաքարային նավթ արդյունահանող ընկերություններն են, որոնք, երբ նավթի գինը անցնում է 45 դոլարը, սկսում են նավթի արդյունահանումը, այդպիսով ավելացնելով առաջարկը:

Կարող ենք պնդել, որ թերթաքարային նավթ արդյունահանող ընկերությունները դարձել են այն զգայուն բարոմետրերը, որոնք նավթի գների բարձրացմանը արձագանքում են դրա արդյունահանման ավելացմամբ, ինչը հանգեցնում է նավթի գների անկմանը: Ցածր գներն էլ, իրենց հերթին, հանգեցնում են թերթաքարային նավթի արդյունահանման նվազեցմանը:

Այսպիսով, հանձինս թերթաքարային նավթի արդյունահանման ընկերությունների, ԱՄՆ-ը ստեղծել է գների հավասարակշռման մի մեխանիզմ, որը թույլ չի տալիս նավթի միջազգային գների թանկացումը: Այսպիսով Վաշինգտոնը ձեռք է բերել նավթի գների վերահսկման լրացուցիչ մեխանիզմ, որը կարող է գործի դնել ըստ իր քաղաքական նպատակահարմարության:



# Ձնագնդի նման աճելու է «Ավրորայի» համաշխարհային արձագանքը

⇨1

Հայաստանցի գործընկերներս պասիվ չմնացին, իհարկե, նկատեցին, որ համաշխարհային բեմին հրաժեշտ չտված դրամատիկ սոպրանոյի համար անհաղթահարելի մնացին թե՛ Բաբաջանյանի «Վոկալիզը», թե՛ Ազնավուրի «Քեզ համար, Հայաստան»-ը: Տպավորություն ունեմ, թե գործընկերներս ավելի նախընտրեցին սոցիալական կայքերում իրենց դժգոհությունն արտահայտել, քան սեփական լրատվամիջոցներում,



ինչն ինձ իրավունք վերապահեց այդ օրվա բարձրակարգ երեկոյի մասին մի քանի խոսք էլ ստորեւ ամրագրել:

Հունիսի 1-ին 80-ամյակը բոլորած Լուսինե Զաքարյանի հոբելյանն առիթ է գրելու, որ Բաբաջանյանը «Վոկալիզը» նվիրել էր հենց նրան: Բարեբախտաբար, այդ ստեղծագործության հրաշալի կատարումը Լուսինեի մահով չի «վերջանում», եւ «Ավրորայի» մրցանակաբաշխության ժամանակ, դիտապաստառին խոշոր պլանով Առնո Բաբաջանյանի վիրտուալ ներկայությունը հուշում է, թե ծրագիր կազմելիս առավել հոգատար պիտի լինենք մեր մեծերի ժառանգության հանդեպ: Իսկ Ազնավուրի իրական ներկայությունը պիտի հիշեցներ ոչ վաղ անցյալում լեգենդար Վարպետի անթաքույց ոգեւորությունը, երբ Հեքեքյանի ղեկավարած «Հայաստանի փոքրիկ երգիչները» իրենց երգացանկում ներկայացրել էին նաեւ «Քեզ համար, Հայաստան»-ը: Եվ եթե «Ավրորայի» ուղերձն աշխարհին ապրիլի 24-ի փոխարեն առավել հարմար էր ուղղել մայիսի 28-ին, նույն խորհրդանշական ձեւաչափն արդյոք չէ՞ր հուշում, թե երգն առ Հայաստան պիտի երգեն հենց հայ փոքրիկները:

Ուրախ եմ, որ գերմանացի գործընկերս չէր «պեղել» Մարիա Գուլեգինայի իմպրեսարիոյի սոցիալական ցանցով տարածած լուսանկարը. այն փաստում էր, թե մեզ բարեգործական, մարդասիրական, շքեղ կյանքից հրաժարվելու անուղղակի ուղերձ սփռող «Ավրորայի» հատուկ հրավիրյալ երգչուհին, ՅՈՒՆԻՍԵՖ-ի բարի կամքի դեսպանը, Երեւան էր ժամանել... հատուկ օդանավով` փոքրիկ ջեթով, ինչին անդրադարձ չարեց նաեւ Հանրային հեռուստաընկերությունը, երբ «Օրակարգի» եթերում ռեպորտաժ ներկայացրեց հենց «Զվարթնոց» օդանավակայանից:

Մի բան այդուհանդերձ հստակ է` հաջորդ տարի գերմանացիներն ավելի մեծ ուշադրությամբ են հետեւելու «Ավրորա» մրցանակաբաշխությանը: «Թագեսշպիգելի» բառապաշարով` ձնագնդի նման աճելու է մարդասիրական այս նախաձեռնության համաշխարհային արձագանքը: Չգիտեմ, թե քանի ակնդիր է ունեցել «Ավրորա» 2017-ը արտերկրում, առանձնապես` Գերմանիայում, բայց համոզված եմ, թե գերմանացի հեռուստադիտողին նման շոուներն հետաքրքրում են: Իսկ դրա մեջ կասկածից վեր է` մեծ դերակատարում ունի շոուն վարողը: Լրագրողական շոյված էգոիզմիս մի վկայություն եւս` 2018-ի հանդիսավոր երեկոն դարձյալ վարելու է Դեյվիդ Իգնեյշըսը, հրաժեշտից առաջ ինքն իրազեկեց: Եթերում չտրտնջաց իհարկե, որ 3 ժամանոց հսկա ծրագիրը 2017-ին մենակ վարեց: Տրտունջն ու հարցը թողեց հայ գործընկերներին` արդարացվա՞ծ էր արդյոք Հասմիկ Պապյանի` մարզահամերգայինի բեմում բացակայությունը: Մի մարտահրավեր, որ պատվով կատարեց 2016-ին. բեմում` հագեցնող ներկայություն, հեռուստաէկրանին` դեմք մագնիս:

# Ի պատասխան ՀՀ վարչապետի կոչի

*Ստորեւ հրատարակում ենք, ի պատասխան մի քանի ամիս առաջ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի սփյուռքահայությանը ուղղած կոչի, սփյուռքահայ հանրածանոթ գործիչ եւ գիտնական դոկտ. Արշավիր Գյոնջյանի նամակը:*

Մեծայարգ եւ սիրելի պրն. Կարէն Կարապետեան, Վարչապետ Հայաստանի Հանրապետութեան

Այս նամակը կը գրեմ Ձեզի, հաւանաբար բազմաթիւ ուրիշներու կարգին, որպէս սփիւռքահայ մը, որ խորապէս առնչուած է ազգային հարցերու եւ որ իր անձնական եւ ընտանեկան պարագաներու փաստացի օրինակով, բազմատասնեակ տարիներու ընթացքին գործնապէս իր մասնակցութիւնը բերած է հայ ժողովուրդի գերագոյն շահերը հետապնդող ջանքերուն, անձնական եւ հաւաքական այլազան նախաձեռնութիւններով:

Ես եւս անոնցմէ եմ, որ կարդացի Ձեր կոչը ուղղուած սփիւռքահայութեան, առաջին հերթին՝ անկեղծ գոհունակութեամբ, այնտեղ Ձեր արտայայտած սրտբաց ընդհանուր հրաւէրին եւ զօրակոչին նկատմամբ, կոչ՝ որ կատարած էք, որպէսզի բազմամիլիոն սփիւռքահայութիւնը իր ոյժերը մասնակից դարձնէ Մայր հայրենիքի կերտումին եւ յառաջդիմութեան:

Սակայն նաեւ, հիմնուելով վերոյիշեալ տուեալներով ունեցած իմ անձնական եւ հաւաքական կեանքի փորձառութեանց վրայ, պարտաւոր կը սեպեմ ինքզինքս Ձեր ուշադրութեան բերել հիմնական կէտեր եւ անոնցմէ բխած պահանջներ, ուղղուած Ձեզի եւ Ձեր վարչապետի հանգամանքին, որպէսզի երբ Ձեր կատարած կոչէն ետք անխուսափելիօրէն գայ ժամանակը, ուր հաշուեյարդարը կատարուի կոչէն բխած արդիւնքներուն եւ սփիւռքահայութեան պատասխանին, այն ժամանակ կարելի ըլլայ արդարօրէն նշել պատասխանատուութիւնները դրական կամ բացասական արդիւնքներուն նկատմամբ:

Մեծայարգ պրն. Վարչապետ, Հայաստանի անկախացումէն 25 տարի ետք, բոլորս, Դուք եւ մենք, համաձայն ենք, թէ ռոմանթիք հայրենասիրութեան շրջանը բոլորովին անցած է: Ձեր կոչը կարդացող եւ լսող ամէն մէկ հայուն եւ յատկապէս սփիւռքահայուն համար կան երկու անխուսափելի տուեալներ, որոնց ազդեցութեան վրայ յենելով է, որ սփիւռքահայը իր յաջորդ քայլը պիտի առնէ, որպէսզի ան պատասխանէ դրապէս եւ կամ մնայ պարզապէս անտարբեր Ձեր տուած սրտբաց հրաւէրին:

Այդ տուեալներէն առաջինը դժբախտաբար այն բոլոր ձախորդ փորձերը եւ յաճախ խոր ցաւ պատճառող վնասներն են, որ ունեցան բազմաթիւ սփիւռքահայեր, վերոյիշեալ ռոմանթիք հայրենասիրութեան շրջանին, երբ անոնք ազնիւ եւ հայրենասիրութեամբ լեցուն մեծ կամ փոքր փորձեր կատարեցին Հայաստան գալու եւ իրենց մասնակցութիւնը եւ նպաստը բերելու երկրին զարգացման աշխատանքին: Այս մասին աւելորդ է աւելին ըսել: Անոնցմէ մի քանի հատին ես անձնապէս շատ մօտէն ծանօթ եւ անձնապէս վկայ եղած եմ:

Եթէ վերեւի այս տուեալը կը պատկանի անցեալին, երկրորդ տուեալը կը վերաբերի այսօրուան, եւ այստեղ է որ ակնկալութիւնը եւ պահանջքը կ'իյնայ ամբողջովին Ձեր վրայ:

Այս երկրորդ տուեալը պատկերաւոր եւ փաստացի կերպով ներկայացնելու համար երկար եւ յստակ օրինակներ տալու փոխարէն պիտի զայն բնորոշեմ հետեւեալ խտացած կերպով: Որպէսզի սփիւռքահայը եւ կամ աւելի ճիշդը՝ առաւել հայաստանաբնակ եւ արտագաղթի ճամբան բռնած հայը հանգիստ զգայ իր կարողութիւնը, միջոցները եւ հետաքրքրութիւնը ուղղելու դէպի Հայաստան, անհրաժեշտ է որ կարենաք երաշխիքը տալ, թէ պետական օղակները իրական ջանքերով ամէն միջոց յանձն առած են, որպէսզի առօրեայ վերաբերմունքի եւ գործի փոխանակումներու մէջ տիրէ յարգանք հանդէպ **ստորագծուած նորմալ բարոյականի եւ արդարութեան**, գոնէ այնքանով, որ մեր ապրած, յատկապէս արեւմտեան երկիրներուն մէջ, այս երկուքին նկատմամբ գոյութիւն ունի բնական ակնկալութիւն եւ հասկացողութիւն, քաջ գիտնալով հանդերձ, թէ ամէն տեղ կան սայթաքումներ, սակայն չկան այն այլանդակ երեւոյթները, որոնք դժբախտաբար կը տիրեն Հայաստանի մէջ եւ որոնց նկատմամբ եթէ ձեռք չառնուին արմատական միջոցներ, Ձեր կոչը դժբախտաբար պիտի չունենայ իսկապէս դրական արձագանգ:

Բարոյականի եւ արդարութեան նկատմամբ հրապարակաւ տեսանելի յարգանք պահանջելը եւ պարտադրելը պետական կառոյցներէն եւ պաշտօնեաներէն՝ Ձեր իրաւասութեան սահմաններուն մէջ են: Նոյնպէս մեր իրաւունքն է պահանջել Ձեզմէ, որ առնէք հարկ եղած՝ թերեւս քաղաքականօրէն դժուար, սակայն անհրաժեշտ քայլերը, որպէսզի անկէ ետք մենք բոլորս դառնանք Ձեր կոչին ջատագովողները, խօսափողերը եւ դրական պատասխանողները:



Վերջացնելէ առաջ այս նամակս, չմնալու համար վերացական ոլորտին մէջ, կ'ուզեմ մատնանշել որպէս սիմպոլիք օրինակներ մի քանի յստակ եւ կոնկրէտ պարագաներ, որոնք տարբեր ձեւերով կրնան հրապարակաւ ուղենշել վերեւը իմ մատնանշած ընդհանուր անկիւնադարձային քաղաքական առողջ մթնոլորտի ստեղծման համար Ձեր առնելիք քայլերը: Հոս պիտի թուեմ երեք տարբեր բնագաւառներու վերաբերող օրինակներ, երթալով ընդհանուրէն դէպի խիստ մասնաւոր հարցեր:

Առաջին առաջարկս կը վերաբերի սփիւռքահայ գործարարներուն գործնապէս վստահութիւն ներշնչելու, դիւրութիւն եւ քաջալերութիւն հայթայթելու մտահոգութեան: Այս նպատակով կ'առաջարկեմ, որ ստեղծէք «**Հայաստանի մէջ Սփիւռքահայ Գործառնութեանց Նախարարութիւն**» մը, որուն աշխատանքի դաշտը ըլլայ՝ նախ քաջալերել եւ յայտնաբերել այն սփիւռքահայերը, որոնք կրնան հետաքրքրուիլ Հայաստանի մէջ ներդրումներ կատարելով, եւ յետոյ եւ մանաւանդ տառացիօրէն քայլ առ քայլ առաջնորդել այդ սփիւռքահայը իր ամէն քայլափոխին, որպէսզի ան չհանդիպի հարկային մարմիններու խժդժութեանց եւ քաղաքային խաժամուժին, երբ սկսի ոտք դնել Հայաստան եւ հաստատել իր գործը Հայաստանի մէջ: **Այդ նախարարութիւնը պարտի իր գլուխը ունենալ հայաստանաբնակ եւ նաեւ սփիւռքահայ որակաւոր անձնակազմ մը:**

Երկրորդ առաջարկս կը վերաբերի սփիւռքահայուն մօտ ընդհանուր բարոյական բարձր մակարդակի նկատմամբ լրջութեան հաւաստիք վերստեղծելու խնդիրին:

Խօսքս կը վերաբերի անթիւ եւ անհամար, լուրջէն մինչեւ ծիծաղելի, հասկնալի եւ անհասկնալի շքանշաններ տալու ստեղծուած անլուրջ սովորութեան: Ես եւս ըլլալով այդպիսի շքանշանի մը ստացողներէն մէկը՝ կրնամ հանգիստ կերպով կատարել այս քննադատութիւնս եւ առաջարկս:

Այսօրուան ստեղծուած վիճակով , արժանաւորը եւ անարժանը անխղճօրէն իրար խառնուած են: Հետեւաբար պէտք է գիտնաք, թէ Հայաստանէն ստացուած որեւէ շքանշան այսօր քմծիծաղով կ'ընկալուի մեր մօտ: Կը բաւէ որ մէկը ունենայ «ազդեցիկ» բարեկամ մը, որպէսզի ստանայ ոսկեայ կամ արծաթեայ շքանշան: Այս եւս կը վերաբերի բարոյականի նկատմամբ Հայաստանի մէջ ստեղծուած արհամարհանքի երեւոյթին: Կ'առաջարկեմ որ, հետեւելով այլ լուրջ պետութեանց եւ հաւաքականութեանց սովորութեան, հաստատէք տարբեր շքանշաններու համապատասխան **յստակ եւ հրապարակուած չափանիշներ,** եւ շքանշանները այսուհետեւ շնորհուին որեւէ թեկնածուի՝ պայմանաւ որ ան իր կոնկրէտ գործունէութեամբ լրացնէ այդ չափանիշներուն պահանջքները: Իսկ ես համաձայն եմ, որ մինչեւ այսօր տրուած շքանշանները վերագնահատուին եւ ջնջուին անոնք, որոնք չեն լրացներ չափանիշներու պահանջքները, եւ կամ ջնջուին բոլորն ալ:

Երրորդ եւ վերջին առաջարկ-օրինակս բարոյականին եւ արդարութեան նկատմամբ յարգանքը վերահաստատուած տեսնելու կապակցութեամբ, կը վերաբերի իմ պատկանած հայ աւանդական կուսակցութիւններէն ամենահին-ամենանորին՝ Ռամկավար Ազատական կուսակցութեան, ՌԱԿ-ին:

Յարգելի պրն. Կարապետեան, նոյնիսկ եթէ անձնապէս Դուք պարագաներու բերմամբ անմիջականօրէն չէք առնչուած հայ աւանդական կուսակցութեանց գործունէութեանց հետ, շատ հեշտ է գտնել անոնց մասին պատմական կոնկրէտ տուեալներ: Ես կը խօսիմ եւ կը գրեմ որպէս ՌԱԿ-ի երկար տարիներու ղեկավար մը եւ յատկապէս մինչեւ 1995 Հայաստանի անկախացման առաջին տարիներուն անոր Կեդրոնական վարչութեան երկարամեայ ատենապետը: ՌԱԿ-ը պատմական տուեալներով անխոնջ եւ անսակարկ առաջնորդը եւ հայրենասիրութեան ջահակիրը եղած է յատկապէս Սփիւռքի մէջ եւ անվերապահ յենարան մը Էջմիածնակեդրոն Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ եւ Հայկական բարեգործական ընդհանուր միութեան:

Դժբախտաբար սակայն, անցնող տասնեակ մը տարիներուն ՌԱԿ-ը զոհը դարձաւ ներքին անիմաստ անհամաձայնութեանց, սակայն անձնապէս ու խորապէս քաջալերուած եւ ուրախ եմ տեսնելով, թէ վերջին մէկ տարուան շրջանին դրական եւ հիմնական նախաձեռնութիւններով աշխարհատարած ՌԱԿ-ի անդամակցութիւնը վերականգնումի մեծ աշխատանք մը տարաւ, միացնելով Հայաստանի եւ Սփիւռքի իր անդամակցութեան ոյժերը անցեալ հոկտեմբերին Երեւանի մէջ կայացած իր համաժողովով: ՌԱԿ-ը վերահաստատեց ինքզինք որպէս **Հայաստանակեդրոն Ռամկավար Ազատական կուսակցութիւն,** Հայաստանի Հանրապետութեան օրէնքներուն վրայ հիմնուած իր օրինական Կեդրոնական վարչութեամբ եւ համասփիւռքեան Գերագոյն խորհուրդով: ՌԱԿ-ը իր աշխարհատարած եօթը թերթերով եւ յատկապէս անգլիատառ ամենաազդեցիկ The Armenian Mirror-Spectator թերթով կը հանդիսանայ ամէնահաւատաւոր եւ յարգուած քաղաքական կազմակերպութիւնը, որ ինչպէս անցեալ հարիւր տարիներուն իր գործունէութեան ընթացքին այսօր եւս անշեղ կերպով կը գործէ յօգուտ հայրենիքի եւ հայ ժողովուրդի գերագոյն շահերուն:

ՌԱԿ-ի մասին այս երկար ներածականէն ետք Ձեր ուշադրութեան կ'ուզեմ յանձնել, թէ այսօր տակաւին դժբախտաբար կայ փոքր անջատողական խմբակ մը ՌԱԿ-ին մէջ, որ կը մնայ անջատ այս մեծ շարժումէն եւ սակայն ինքզինք կը շարունակէ կոչել «ՌԱԿ Կեդրոնական վարչութիւն»: Այս վերջինը չունի կանոնագրային օրինականութեան ոչ մէկ հիմք: Սակայն **մեծ զարմանքով, յուսախաբութեամբ եւ դժգոհութեամբ** ականատես ենք այն անհաւատալի երեւոյթին, որ, հակառակ իրենց տրուած բոլոր բացատրութեանց, Հայաստանի պետական օղակներ կը շարունակեն ինչ-ինչ պատճառներով տակաւին լուռ կամ բացայայտ կերպով զօրավիգ կանգնիլ այդ անօրինական խմբակին եւ անտեսել հայաստանակեդրոն եւ օրինական ՌԱԿ-ի հսկայ շարժումը: **Ինչո՞ւ:** Այս երկար նամակիս մէջ բարոյականի եւ արդարութեան հանդէպ յարգանք ցոյց տալու անհրաժեշտութեան օրինակներուն մաս կը կազմէ նաեւ այս պահանջը, որով պէտք է անյետաձգելիօրէն վերջ տրուի անընդունելի եւ անարդար այս կեցուածքին: Այս մասին կը սպասենք Ձեր պատասխանին:

Յարգելի եւ սիրելի պրն. Վարչապետ, Ձեր սքանչելի կոչը, բնականօրէն հրաւէր է նաեւ լուրջ եւ թերեւս դժուար իրագործելի ու սակայն անհրաժեշտ փոխադարձ շինիչ առաջարկներու: Հաճեցէք այս գրութիւնս ընդունիլ որպէս այդ:

Յարգանքներով եւ յաջողութեան մաղթանքներով՝

**Դոկտ. ԱՐՇԱՒԻՐ ԿԷՕՆՃԵԱՆ**
**Անդամ ՌԱԿ-եան Գերագոյն խորհուրդին**
**Շրջանաւարտ ատենապետ ՌԱԿ Կեդրոնական վարչութեան (1980-1995)**
**Պատուոյ ատենապետ Հայ եկեղեցւոյ Գանատահայոց թեմական խորհուրդի**
**Շրջանաւարտ փոխ-նախագահ Հ.Բ.Ը.Մ. Կեդրոնական վարչական ժողովի եւ այժմ**
**Վաստակաւոր (Emerite) անդամ Հ.Բ.Ը.Մ. Կեդրոնական վարչական ժողովի**
**Մոնթրէալ, 15 Մարտ 2017**

## Հաստատվել է Ստամբուլի Թուզլա շրջանի զարգացման ծրագիրը

**«Ակօս» թերթի հաղորդման համաձայն, Ստամբուլի քաղաքապետարանը հավանություն է տվել Թուզլա շրջանի զարգացման ծրագրին, որը ներառում է կառուցել այնտեղ նոր կրթական եւ մշակութային կենտրոններ, կինոթատրոն եւ գրադարան:**

**Ծրագիրը նախատեսում է նաեւ վերանորոգել շրջանի «Քեմպ Արմեն որբանոցը», որը երկար բանակցություններից հետո Գեդիկփաշայի Հայ բողոքական եկեղեցու հիմնադրամին էր վերադարձվել 2015-ի հոկտեմբերին:**

**«Քեմպ Արմեն որբանոցը» կառուցել էին հայ որբերը: Վաղամեռիկ Հրանտ Դինքն ու կինը՝ Ռաքելը, այնտեղ են մեծացել: 1983-ին թուրքական կառավարությունը բռնագրավել էր որբանոցը: Երբ 2011-ին եկեղեցապատկան որոշ կալվածներ վերադարձվեցին իրենց իսկական սեփականատերերին, «Քեմպ Արմենը» չէր ներառվել ցուցակում, եւ բուլդոզերները 2015-ին սկսել էին քանդել շենքը: Բարեբախտաբար որոշ կազմակերպությունների եւ քաղաքացիների ջանքերի շնորհիվ կանգնեցվել էր քանդումը: Որբանոցը զբաղեցնում է մոտ 5000 քառ. մետր տարածք: Վերակառուցման աշխատանքները կսկսվեն շուտով:**

Հ. Ծ.

# Եվրոմիության եւ ՆԱՏՕ-ի գագաթաժողովների արդյունքները

## *Մերկելը ԵՄ ինքնուրույնության կոչ է անում*




Ինչպես եւ սպասում էին արեւմուտքի քաղաքագետները եւ փորձագետները, ԱՄՆ-ի նոր նախագահ Դոնալդ Թրամփի մասնակցությամբ օրերս անցկացված Եվրոմիության եւ ՆԱՏՕ-ի գագաթաժողովները դարձան ճակատագրական. երբեմնի Եվրոպան եւ եվրոպական համերաշխությունը գտան իրենց վախճանը: Արեւմուտքում եւ հետխորհրդային տարածքում հակառուսական լրատվամիջոցները աճապարեցին հաղթանակ տոնել եւ տարբեր ձեւերով մեկնաբանել ՆԱՏՕ-ի գագաթաժողովի այն հայտարարությունը, թե ԱՄՆ-ը եւ Եվրոպան համատեղ կդիմակայեն ռուսների նախահարձակմանը եւ պատրաստակամ են խստացնելու հակառուսական պատժամիջոցները: Մինչդեռ իրականությունը միանգամայն ուրիշ է:

ՆԱՏՕ-ի գագաթաժողովի արդյունքների հաջողությունը սկզբում հենց կիրակի օրը կասկածի տակ առավ Սպիտակ տունը: Նախագահ Դոնալդ Թրամփի արտասահմանյան առաջին ուղեւորության ընթացքում նրան ուղեկցած Սպիտակ տան ազգային տնտեսական խորհրդի ղեկավար **Գերրի Քոնը** հայտարարեց, որ ՆԱՏՕ-ում քննարկման թեման են դարձել պատժամիջոցները եւ Ռուսաստանը: Տարբեր երկրներ բանավիճել են հակառուսական պատժամիջոցների շուրջ, սակայն ԱՄՆ-ը դեռեւս հստակ դիրքորոշում չունի այդ հարցի առթիվ:

Այնուհետեւ Գերմանիայի կանցլեր **Անգելա Մերկելը** մայիսի 28-ին «Մեծ յոթնյակի» եւ ՆԱՏՕ-ի գագաթաժողովների ավարտից հետո հանդես եկավ իր կառավարման ժամանակահատվածում առավել աղմկալի հայտարարությամբ: Ինչպես նշեց Մերկելը, եվրոպացիները պարտավոր են ամեն ինչ վերցնել իրենց ձեռքը եւ անձամբ տնօրինել սեփական ճակատագիրը: «Մենք՝ եվրոպացիներս, պետք է ինքներս տնօրինենք մեր ճակատագիրը, իհարկե բարեկամություն անելով ԱՄՆ-ի, Բրիտանիայի եւ լավ հարեւաններ լինելով հնարավոր բոլոր երկրների, այդ թվում նաեւ Ռուսաստանի հետ: Անցել են այն ժամանակները, երբ մենք կարող էինք հույս դնել ուրիշների վրա»,- ասաց Մերկելը:

Կարեւոր է Մերկելի նաեւ այն հայտարարությունը, թե ինքը այդ եզրակացությանը հանգել է վերջին օրերի իրադարձությունների պատճառով: Սա նշանակում է, որ նրա հայտարարությունը հուզական բնույթ չի կրում: Այն կշռադատված է եւ հասցեագրված բնակչության լայն զանգվածներին:

Արդ ի՞նչ տեղի ունեցավ արտաքուստ ոչ այնքան բուռն, բայց շատ կարեւոր այդ երկու գագաթաժողովներում, որոնք աչքի չընկան աղմկալի հայտարարություններով, բայց նշանավորեցին Արեւմուտքի պառակտումը արդի օրակարգի բոլոր էական հարցերի առթիվ:

Առաջին, ուրվագծվեցին ԱՄՆ-ի ու Եվրոպայի լուրջ տարաձայնությունները արդիականության մի շարք հարցերի վերաբերյալ: Այսպես Սիցիլիայում «Մեծ յոթնյակի» գագաթաժողովը քիչ էր մնում ձախողմամբ ավարտվեր մոլորակի ընդհանուր ջերմացման հարցում ԱՄՆ-ի սկզբունքային դիրքորոշման պատճառով (ինչպես հանդիպումից հետո հայտարարեց Սպիտակ տունը, ԱՄՆ-ը դուրս կգա կլիմային նվիրված Փարիզյան համաձայնագրից): Լուրջ վիճաբանության մյուս թեման Աֆրիկայում սովի դեմ պայքարելու հարցն էր: Հարկ է նշել, որ օրակարգում հետին պլան էին մղվել Սիրիան, ահաբեկչությունը, Ուկրաինան:

Խոսակցության այդ ոճը պայմանավորված էր տվյալ պահի առանձնահատկությամբ: Ինչպես նշում է «Ռեգնում» գործակալության մեկնաբան **Յուրի Բարանչիկը**, Եվրոմիության երկրները ուզում էին ԱՄՆ-ի նոր նախագահ Թրամփի դիրքորոշումը պարզել ակնհայտորեն երկրորդական հարցերի վերաբերյալ եւ հետո միայն, տվյալ գործում հաջողության հասնելու դեպքում, ձեռնամուխ լինել գլխավորին, որպեսզի խուսափեն ձախողումից: Եվ Թրամփն էլ ցանկության դեպքում կարող էր հաստատել իր հավատարմությունը ԱՄՆ-ի մինչեւ օրս որդեգրած ուղեգծին: Սակայն Թրամփը որոշեց կազմակերպել ցուցադրական ելույթ եւ նույնիսկ ակնհայտորեն երկրորդական հարցերի քննարկման ընթացքում եվրոպացիների համար անհնարին դարձրեց իրոք կարեւոր հարցերի լուծման հեռանկարը: Դրանից հետո Եվրոմիության համար ակնհայտորեն դժվար էր խոսել իսկապես կարեւոր հարցերի մասին:

Երկրորդ՝ ուրվագծվեցին տարաձայնություններ օրակարգի նաեւ ռազմաքաղաքական հարցերի առնչությամբ: Այսպես, Սպիտակ տունը պահանջեց, որ ՆԱՏՕ-ի անդամ 28 երկրներից 23-ը իրենց բյուջեներում ռազմական ծախսերի բաժինը հասցնեն 2 %-ի: Այս թիվը որքան էլ փոքր թվա, այդուհանդերձ զգալի է Եվրոմիության «շփացած» երկրների համար: Եվ ակնհայտ է, որ Թրամփը մինչեւ 2024 թվականը չի սպասի այդ զուտ տեխնիկական խնդրի լուծմանը: Եվ Թրամփը ոչ մեկին որեւէ խոստում չտվեց ի դեպս այն բանի՝ եթե Եվրոպան չապահովի վճարումները:

Բացի դրանից, դատելով հակառուսական պատժամիջոցներն ընդլայնելու պատրաստակամության արտահայտումից եւ Մերկելի փաստական կապիտուլյացիայից, գագաթաժողովների ժամանակ տվյալ հարցերին առնչվող խոսակցությունը իրականում շատ ավելի կոշտ է եղել, քան կարելի է դատել հրապարակված փաստերի վրա հիմնված վերլուծություններից: Զգալի է դառնում նաեւ Եվրոմիության վրա ԱՄՆ-ի ճնշման տնտեսական կողմը՝ հակառուսական պատժամիջոցները վնաս են պատճառում գլխավորապես Եվրոմիությանը, բայց ոչ ԱՄՆ-ին եւ Մեծ Բրիտանիային:

Սակայն գլխավորն այն է, որ Եվրոպան Ռուսաստանի դեմ մենակ է մնում Ուկրաինայի հարցում: Հիշյալ երկու գագաթաժողովներում Թրամփը ոչ մի անգամ չհիշատակեց այդ կարեւոր խնդիրը: Սա նշանակում է մեկ բան. Վաշինգտոնը տվյալ խնդիրը իրենը չի համարում: Իրանի, ահաբեկչության, Եվրոպայի հետ անարդարացի առեւտրի խնդիրները գոյություն ունեն, մինչդեռ Ուկրաինայի քաղաքացիական պատերազմի եւ ըստ այդմ Ռուսաստանի՝ որպես նախահարձակ երկրի խնդիրները գոյություն չունեն:

ՆԱՏՕ-ի գագաթաժողովի արդյունքների կապակցությամբ գերմանացի քաղաքագետ **Ալեքսանդր Ռառը** նշում է. «Արտաքին քաղաքականության հանդեպ գործնապաշտական մոտեցման վերաբերյալ քանիցս հայտարարած եւ իրական սպառնալիքները հասկացող պարոն Թրամփը հնարավոր ամեն ինչ կանի, որպեսզի ՆԱՏՕ-ի գծով մերձավորագույն դաշնակիցները այսուհետեւ Մերձավոր Արեւելքում օժանդակեն ԱՄՆ-ի գործողություններին գոնե ֆինանսական առումով: Այո, նրանք են ուզում բռնվել ձեռնամարտի, ուստի ստիպված կլինեն վճարել: Իսկ եթե նրանք չուզենան կատարել հակաահաբեկչական պայքարի նոր խնդիրը, ապա Սպիտակ տան ղեկավարը կարող է որոշել մարտի գնալ ուրիշ դաշնակիցների, այդ թվում նաեւ Ռուսաստանի հետ»:

Այս համատեքստում Մերկելի մայիսի 28-ի հայտարարությունը շրջադարձային է. որպես երկբեւեռ աշխարհի տրոհման արդյունք ծագած նախկին Եվրոմիությունն այլեւս գոյություն չի ունենա:

Ինչո՞վ էր ապահովվում ԵՄ ներկայիս մոդելի գործունեությունը: Նրանով, որ դրան մասնակցում էին եւ գործունեությունը մեծ չափով ապահովում էին անգլոսաքսերը: Ֆինանսական հայեցակարգում ԵՄ-ն փոխարինում էր մարկին, ԵՄ քաղաքական կառուցվածքը Եվրոխորհրդարանում քվոտաներ էր ապահովում Վաշինգտոնին եւ Լոնդոնին ձեռնտու որոշումների ընդունման համար: Այս կառուցվածքում ռազմաքաղաքական «հովանոցը» եւ ռազմական ծախսերը ապահովում էր ԱՄՆ-ը, իսկ Մեծ Բրիտանիան Գերմանիայից եւ Ֆրանսիայից հետո երրորդ խոշոր վճարողն էր ԵՄ բյուջեին: Այժմ այդ ամենը գոյություն չունի: Թրամփը ցույց տվեց, որ ԱՄՆ-ը պատրաստ է Եվրոմիության համար իբրեւ հովանավոր մնալ լոկ այն դեպքում, եթե եվրոպացիները իրոք Վաշինգտոնին վճարեն նրա պահանջածը՝ առայժմ 2 %-ը: Մեծ Բրիտանիան, դուրս գալով ԵՄ-ից, այսուհետեւ չի ֆինանսավորի նրան:

Ֆրանսիային կարելի է առհասարակ չդիտարկել որպես համաշխարհային մեծություն, քանի որ նա վաղուց գոյություն ունի իր գաղութների հաշվին եւ ինքնուրույն ֆինանսական կշիռ չունի համաշխարհային տնտեսության մեջ: Նա եկամտի տոկոսներով ապրող երկիր է եւ համաշխարհային քաղաքականության սուբյեկտի դերում հանդես է գալիս բացառապես իր երբեմնի ձեռքբերումների շնորհիվ: Հենց որ այդ նախկին գաղութները հրաժարվեն Ֆրանսիայում իրենց ոսկու եւ արժույթի պաշարները եւ ապրանքները մատակարարել նեոգաղութատիրական գներով, Ֆրանսիան միջազգային վարկանշային ցանկում կիջնի եւ կհայտնվի երկրների երկրորդ տասնյակում: Իսկ Ֆրանսիայում ներկայումս գոյություն ունեցող ազգամիջյան եւ միջդավանանքային խնդիրների ամբողջությունը այդ երկիրը պայթյունավտանգ է դարձնում Եվրոպայում:

Արդյունքում անգլոսաքսերը Եվրոմիությունը վերացնելու գործընթաց են սկսել. համաեվրոպական «Ֆրանկենշտեյնի» ստեղծման ծախսերը զգալիորեն գերազանցում են դրա օգտագործման արդյունավետությունը, նշում է «Ռեգնում» գործակալությունը: Եվ քանի որ անգլոսաքսերը չունեն մշտական դաշնակիցներ, այլ ունեն մշտական շահեր, ապա Մերկելը զարմանալու պատճառ չունի:

Անգլոսաքսերը Գերմանիային լքում են հարյուրամյակի ընթացքում արդեն երրորդ անգամ: Ո՞րն է նման իրավիճակի պատճառը: Այն պարզ է. Ռուսաստանի հետ Ատլանտյան օվկիանոսից մինչեւ Խաղաղ օվկիանոս միասնական եվրասիական տարածքի շրջանակներում աշխարհաքաղաքական, տնտեսական եւ գիտա-արդյունաբերական դաշինք կնքելու փոխարեն Գերմանիան, ելնելով աշխարհում իր ազդեցության եւ կարգավիճակի խորապես սխալ գնահատականից, երեք անգամ փորձել է Ռուսաստանը ջնջել աշխարհի երեսից եւ իրեն ենթարկել: Դա չի հաջողվել: Իսկ սխալների դիմաց հարկավոր է վճարել: Եվ քանի որ Գերմանիան սեփական սխալների համար վճարելու մտադրություն չունի, ապա նրա փոխարեն դա պետք է անեն ուրիշները: Սկզբունքորեն հասկանալի է, թե ովքեր կլինեն դրանք:

Ուստի որեւէ կասկած չպետք է լինի այն հարցում, որ թե՛ Brexit-ը, եւ թե՛ Թրամփը նույն կարգի երեւույթներ են: Այնպես որ Գերմանիան մեն-մենակ է մնում Եվրոմիության բոլոր ֆինանսական, քաղաքական եւ կառուցվածքային խնդիրներին դեմ-հանդիման: Եվ Մերկելի արած հայտարարությունը հենց դրան է վերաբերում: Դա ամենքին ուղղված հրաման է՝ «Նախապատրաստվե՛լ»: Նման պայմաններում Մերկելի գլխավորությամբ Գերմանիայի քաղաքական վերնախավի անելիք առաջին քայլը Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորումն է: Իսկ դա նախ եւ առաջ նշանակում է Ուկրաինայի խնդրի լուծման այն տարբերակի ընդունում, որն առաջարկում է Մոսկվան: Քանի դեռ ուշ չէ, Գերմանիան պատրաստ է ապացուցել, որ ինքը ի վիճակի է Ռուսաստանի հետ համաձայնության հասնել իրավահավասար գործընկերության սկզբունքով, ինչպես վայել է իսկական գործընկերներին:

Փաստորեն սա է ամբողջը: Թրամփը կատարեց այն, ինչ ինքը ծրագրել էր: Եվրոմիությունն արթնացավ քաղաքական քնից եւ այժմ ստիպված է գործել ինքնուրույնաբար, առանց Վաշինգտոնին նայելու: Սա վերադարձ է քաղաքական իրատեսությանը: Եվրոպան այլեւս չունի դաշնակիցներ: Նա սեփական հայեցողությանն է թողնվել վաթսունամյա վերահսկողությունից հետո: Իսկ եթե նկատի ունենանք Եվրոմիության երկրների քաղաքական եւ տնտեսական տարբեր կշիռները, նրանց հաճախ տրամագծորեն հակադիր քաղաքական, առեւտրական եւ ֆինանսա-տնտեսական շահերը, ապա Գերմանիային դժվար թե հաջողվի միավորել տարբեր արագություններով զարգացող եվրոպական երկրներին: Նա միայն կկարողանա իր շուրջը պահպանել հին Եվրոպայի պատառիկները:

Նման պայմաններում ի՞նչ կանի ԵՄ արեւելյան ծայրամասը, չխոսելով արդեն Եվրոմիություն մտած կամ դեպի այնտեղ ձգտող նախկին խորհրդային հանրապետությունների մասին: Հնարավոր է, որ Մերկելը, ինչպես եւ Գերմանիան, մոտ ժամանակներս իրենց վրայից թոթափեն պատասխանատվությունը: Թե դա ինչ ձեւով կարվի, դեռեւս անհայտ է: Ենթադրվում է՝ դա տեղի կունենա բանկային ճգնաժամի հետեւանքով եվրոյից հրաժարվելու եւ մարկին վերադառնալու, ինչպես նաեւ Գերմանիայի գերիշխանությունը ճանաչող երկրներին ԵՄ ընդունելու միջոցով:

Այս պայմաններում Ռուսաստանը իրեն է վերադարձնում Եվրոպայում իր ազդեցության գոտին, ներառյալ ներկայիս Ուկրաինայի, Մոլդովայի, ինչպես նաեւ հարավում՝ Կովկասի տարածքի նշանակալի մասը: Հարցը լոկ այն է, որ դա պետք է արվի առանց անցյալի սխալների կրկնության: Խոսքը ոչ միայն տվյալ տարածքների ժողովուրդների, այնպես էլ բաժանված ռուս ժողովրդի միավորման, գաղափարախոսական, պատմամշակութային եւ արժեքային կողմերի ապահովման մասին է:

**Պ. Ք.**

AZG NEW SHABAT.QXD 31/05/2017 21:45 Page 12



# 70-ամյակ՝ լրջագույն վաստակով



Երեկ լրացավ պատմաբան, պետական գործիչ, Հայաստանի Անկախության հռչակագրի հեղինակ **Կտրիճ Խաչիկի Սարդարյանի** ծննդյան 70-ամյակը: Հոբելյարը եղել է ԵՊՀ-ի դասախոս, տարբեր գերատեսչությունների աշխատակից, 1990 թ.-ին Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր եւ անկախ պետականության հաստատման եւ ազգային քաղաքականության մշտական հանձնաժողովի նախագահ, նույն թվի աշնանը ՀՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, ավելի ուշ՝ ՀՀ նախագահի պետական քաղաքականության եւ ազգային հարցերի գծով խորհրդական, իսկ 1998-ին՝ ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ:

Հեղինակ է մի շարք կարեւոր աշխատությունների, հիմնականում 1920-ական թվականների Հայաստանի պատմությանը նվիրված, որոնցից առավել կարեւորներն են՝ «Պատմություն եւ իրականություն» (1991 թ.), «Անցման շրջանի օրինաչափությունները եւ հայ քաղաքական միտքը» (1997 թ.), «Հիշողություններ ապագայի մասին» (1997 թ.), «Պետական սկիզբ եւ ազգային շարունակություն» (1999 թ.), «Հայ-վրացական հարաբերություններ» (2002 թ.), «Հայաստանը համաշխարհային հեղափոխության արեւելյան խաչմերուկում» (2007 թ.): Կ. Սարդարյանը ուշագրավ մի շարք հրապարակումների եւ հոդվածների հեղինակ է նաեւ, որոնք լույս են տեսել տարբեր պարբերականների էջերում, այդ թվում՝ «**Ազգ**» օրաթերթում:

Շիտակ, սկզբունքային, դեպքերն ու դեմքերը սթափ գնահատող եւ վերլուծական հրաշալի մտքի տեր պատմաբանը, մեր գնահատմամբ, կարեւոր ներդրում ունի հայոց քաղաքական մտքի գնահատման ու զարգացման գործում:

Ջերմորեն շնորհավորելով հարգելի պատմաբանի եւ պետական գործչի 70-ամյակը, քաջառողջություն եւ քննավերլուծական նորանոր աշխատություններ ենք ակնկալում նրանից:

«ԱԶԳ»

# Գրավիչ ամառային սակագներ ԱՄՆ ռոումինգում՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ից

ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է իր բաժանորդներին, որ մինչեւ 2017թ. օգոստոսի 31-ն ԱՄՆ-ում սահմանված են ռոումինգ ծառայությունների հետեւյալ սակագները.

| | |
|---|---|
| **Դեպի ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանց** | **25 Դ/րոպե** |
| **«Զանգ Հայաստան» ծառայության միջոցով զանգեր** | |
| **Տեղական ուղղություններով** | |
| **Մուտքային զանգեր** | |
| **Ելքային SMS** | **25 Դ/SMS** |
| **Ինտերնետ** | **25 Դ/ՄԲ** |
| **Դեպի ՀՀ այլ, +374 97 եւ +374 47 զանգեր** | **100 Դ/րոպե** |

«ՎիվաՍել-ՄՏՍ-ն իր գործունեության առաջին իսկ օրվանից ջանք չի խնայում իր ճանապարհորդող բաժանորդների համար միջազգային ռոումինգի ծառայություններն առավել մատչելի դարձնելու համար: Ուստի՝ ռոումինգի սակագների լավագույն լուծումներն ու առաջարկները միշտ լինելու են ՎիվաՍել-ՄՏՍ-ի գործունեության կարեւորագույն ուղղություններից եւ շարունակական բնույթ են կրելու», - ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը: Մեր նորություններին մշտապես ծանոթ լինելու համար միացեք մեզ Ֆեյսբուքում https://www.facebook.com/MTSArmenia/

# Համարձակ դիվանագետ Էվանսի «Պատանդված ճշմարտությունը»

Գրականությանը, խիզախությանը եւ լեգենդներին նվիրված միջոցառումների շարք է նախատեսել անցկացնել Մեծն Բոստոնի Սբ. Երրորդություն հայկական եկեղեցին: Առաջին միջոցառման համար հրավիրվել է Հայաստանում Մ. Նահանգների նախկին դեսպան Ջոն Էվանսը, որը ներկայացրել է իր նոր «Պատանդված ճշմարտությունը: Ամերիկան եւ Հայոց ցեղասպանությունը: Ի՞նչ էր առաջ: Ի՞նչ է հիմա» (Truth Held Hostage: America and the Armenian Genocide; What Then? What Now?) գիրքը, եկեղեցու Չարլզ եւ Նվարդ Թալանյան մշակութային կենտրոնում:

Հատորին անդրադարձողներն այն որակել են դեսպան Մորգենթաուի 1918-ին Հայոց ցեղասպանության մասին գրած հուշագրությունից հետո ամենակարեւոր աշխատությունը գրված ամերիկացի դիվանագետի կողմից:




«Պատիվ է մեզ համար հյուրընկալել այս խիզախ դիվանագետին, որը չվարանեց պաշտպանել ճշմարտությունը: Նրան լսելը անջնջելի տպավորություն է թողել մեր սրտերում եւ մտքերում: Վստահ եմ, ամեն հայ կցանկանար ունենալ մեկ օրինակ այդ գրքից», նշել է այդ առթիվ եկեղեցու հոգեւոր հայր **Վազգեն Գուզույանը**:

Էվանսը Մ. Նահանգների պետքարտուղարությունում ծառայել է ավելի քան 35 տարի (1971-2006 թվերին): Հայաստանում ԱՄՆ դեսպան է եղել 2004-ից 2006 թվականը, որից հետո «ցեղասպանություն» բառը օգտագործելու համար հեռացվել է պաշտոնից: Բացի վերոնշյալ գրքից, հեղինակել է նաեւ «Ուրեմն Աստված էլ պետք է որ հայ լինի: 16 ելույթ հայկական թեմաներով» հատորը (Therefore God Must Be Armenian: Sixteen Talks Given on Armenian Issues (2007-2012):

«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» մայիսի 20-ի համարում **Հարրի Մեծատուրյանը** անդրադառնում է Մ. Նահանգների քաղաքականության հակասական բնույթին, եւ գրում, որ մինչ այլ երկրներում (Ֆրանսիայում, օրինակ) դեսպաններին չի թույլատրվում մասնակցել Հայոց ցեղասպանության ոգեկոչման արարողություններին, Հայաստանում նրանց թույլատրվում է ծաղկեպսակ դնելու արարողությանը մասնակցել, բայց խստիվ արգելված է որեւէ խոսք ասել այդ առնչությամբ: Լռությունը պարտադրված է: Ճշմարտությունը՝ պատանդված:

«Բռնության ենթարկվածները ակնկալում են, որ ճշմարտությունը բացահայտվի եւ մեղավորները պատժվեն: Թշնամիների կողմից կարելի է ակնկալել լռություն եւ անտարբերություն, բայց բարեկամները չպետք է լուռ մնան: Բարեկամների լռությունը անհանդուրժելի է», նշում է Մեծատուրյանը, եւ ավելացնում, որ Էվանսը իր գրքում «10 համեստ առաջարկներ» է ներկայացնում Ամերիկայի եւ Թուրքիայի կառավարություններին, որոնք պետք է լրջորեն ուսումնասիրվեն նրանց կողմից վերջ տալու համար այս երկար ձգվող լռությանը:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

VIVACELL MTS

Տեղեկացնում ենք, որ 2017թ. հունիսի 1-ից ՎիվաՍել-ՄՏՍ-ի «ՄՏՍ կոնեկտ» անսահմանափակ, ինչպես նաեւ «Office-Zone» «Home-Zone Turbo» ինտերնետային սակագնային պլանները արխիվացվելու են եւ այլեւս հասանելի չեն լինելու նոր բաժանորդագրության համար:

Այն բաժանորդները, որոնք արդեն բաժանորդագրված են նշված սակագնային պլաններին (կամ կբաժանորդագրվեն մինչեւ 2017թ. հունիսի 1-ը ներառյալ), կշարունակեն օգտվել դրանցով տրամադրվող ծառայություններից՝ նույն պայմաններով:

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ

www.azg.am

# Վրացի սահմանապահները երազ են տեսել

➩5

**Ավելի ուշ Լեյլա Մուստաֆաեւան կրկին կապվում է լրագրողների հետ եւ նրանց հայտնում, որ իր ամուսնուն տարել են Բաքու, հասկանալի է, որ ոչ Կոլտնտեսության հրապարակի սրճարան, կամ առհասարակ սրճարան: Լեյլան լրագրողների ուշադրությունը հրավիրում է հատկապես այն հանգամանքի վրա, որ իր ամուսնու անձնագիրն իր մոտ է, այսինքն Աֆղան Մուխտարլին առանց անձնագիր, հետեւաբար անօրինական է տարվել Բաքու: Վրացի լրագրողները հատկապես այս տեղեկությունից հետո անմիջապես կապվում են իրենց երկրի համապատասխան մարմինների հետ ու այստեղ սկսվում է իրական պատմությունը:**

**Վրաստանի ՆԳՆ-ն հայտնում է, որ այդ առիթով ավելի ուշ հայտարարությամբ հանդես կգա: Այս մասին վրացական ՆԳՆ-ն հայտնում է մայիսի 30-ին: Դեպքը, հիշեցնեմ, տեղի է ունեցել մայիսի 29-ին, Լեյլա Մուստաֆաեւան ոստիկանություն է դիմել մայիսի 29-ին, լրագրողները ոստիկանություն հարցում են ուղարկել մայիսի 29-ին, Դաշգին Աղալարլին լրագրողների հետ զրուցել եւ Վրաստանում ադրբեջանական «բեսպրիդելի» մասին հայտնել է մայիսի 29-ին:**

**Մայիսի 30-ին Վրաստանի ՆԳՆ-ն իսկապես հանդես եկավ հայտարարությամբ: Կարդում ենք՝ «Վրաստանի տարածքում անհետացած ազգությամբ ադրբեջանցի լրագրող Աֆղան Մուխտարլիին Վրաստանի տարածքում որոնելու համար Վրաստանի ՆԳՆ-ն ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ»: Քանի որ ե՛ւ մենք, ե՛ւ տիկին Մուստաֆաեւան, ե՛ւ պարոն Աղալարլին հրաշալի հասկանում ենք, որ Վրաստանի ՆԳՆ-ն այդպես էլ չի կարողանալու գտնել ազգությամբ ադրբեջանցի լրագրող Աֆղան Մուխտարլիին՝ Վրաստանի տարածքում, այն պարզ պատճառով, որ Աֆղանը Վրաստանի տարածքում չէ եւ այդ մասին Վրաստանի ՆԳՆ-ն տեղեկացվել է առնվազն տեղական մամուլի միջոցով, ապա փորձենք հասկանալ, թե ի՞նչ է դեպքի առնչությամբ ասում Վրաստանի ԱԳՆ-ն. չէ՞, որ, ըստ տեղեկությունների, ընդ որում, արժանահիշատակ, տեղի է ունեցել Վրաստանի պետական սահմանի անօրինական հատում, այն էլ այլ պետության հատուկ ծառայությունների «բեսպրիդելի» արդյունքում: Պարզվում է Վրաստանի ԱԳՆ-ն այս դեպքի առնչությամբ լռում է, սա այն պարագայում, երբ առիթ-անառիթ հայտարարում է, որ Վրաստանը եվրոպական երկիր է, որտեղ բոլոր քաղաքացիները պաշտպանված են, մարդու ամեն մի իրավունքը՝ հարգված, եւ այլ պետությունների կողմից երկրում ինչ-որ, առավել եւս՝ ապօրինի գործընթացներ իրականացնելը՝ բացառելի:**

**Մյուս կողմից, չի բացառվում, որ Վրաստանի ԱԳՆ-ի եւ առհասարակ պաշտոնական Թբիլիսիի լռությունն այս թեմայի հետ կապված, արդարացված է: Շատ հնարավոր է, որ Վրաստանում լրջորեն մտածում են փոխել երկրի՝ բոլորիս հայտնի Վրաստան անունը, Վրաստանի՝ վերջերս ստացած եւ կոչող մականունով՝ SOCARtvelo:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 1.6.2017, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: